«ԱՄԲԵՐԴ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 9/1

Հեղինակներ՝
ԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՄԵՐԻ ԲԱԴԱԼՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԱՐԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ, ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏ ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 378(479.25) : 330(479.25)
ԳՄԴ 74.58(2Հ) + 65.9(2Հ)
Ա 742

Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Գրախոսներ՝

Բայադյան Ա. Հ.
տ.գ.դ., պրոֆեսոր
Զաքարյան Ա. Ե.
տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Ա 742 **Ասլանյան Ա..**
ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը, փոխհարաբերությունները աշխատանքի շուկայի հետ և գնագոյացման հիմնախնդիրները / Ա . Ասլանյան , Մ. Բադալյան, Ա.. Հովհաննիսյան.– Եր.: Տնտեսագետ, 2014 -64 էջ.- («Ամբերդ» մասենաշար):

Այսօր կրթական կարևորագույն հիմնահարց է կրթության մատչելիությունը և վճարելիությունը: Այս համատեքստում առանցքային է կրթական ծառայությունների գնագոյացման խնդիրը: Մենագրությունում կրթական ծախսերը դիտարկվել են որպես ներդրումներ մարդկային կապիտալում: Դրանից ելնելով՝ կատարվել է բարձրագույն կրթության ֆինանսական ծախսերի նպատակահարմարության հաշվարկ՝ ըստ մասնագիտությունների, մեթոդաբանական երկու տարբերակով: Ներկայացվել են կրթական ծառայությունների և աշխատանքի շուկաների փոխհարաբերության առանձնահատկությունները ՀՀ-ում, բացահայտվել են հնարավոր զարգացման ուղղությունները:

ՀՏԴ 378(479.25) : 330(479.25)
ԳՄԴ 74.58(2Հ) + 65.9(2Հ)

ISBN 978-9939-61-093-1

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աննա Ասլանյան
տ.գ.դ., պրոֆեսոր
ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՈԼՈՐՏԻ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ **5**

Եզրակացություններ և առաջարկություններ 21

Օգտագործված գրականության ցանկ..... 22

Ամփոփումներ 23

Մերի Բաղալյան
տ.գ.թ., դոցենտ
ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ **25**

Եզրակացություններ և առաջարկություններ 43

Օգտագործված գրականության ցանկ..... 44

Ամփոփումներ 45

Արևիկ Հովհաննիսյան
տ.գ.թ., դոցենտ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ..... **47**

Եզրակացություններ և առաջարկություններ 60

Օգտագործված գրականության ցանկ..... 61

Ամփոփումներ 62

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀՈՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աննա Ասլանյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Կրթությունը մարդկության առջև կանգնած բազմաթիվ նոր, գլոբալ խնդիրների լուծման կարևորագույն միջոց է: Մեր երկիրն ունենալով սահմանափակ բնական ռեսուրսներ և ներդրումային հնարավորություններ, կրթական ոլորտը դիտարկում է որպես առաջնային և զարգացումն ապահովող հիմնական գործոն: Դրա լուծման անհրաժեշտ պայմանը բարձրագույն կրթությունն է, որի զարգացումը ամենակարևոր ազգային առաջնայնություններից է, ինչի շնորհիվ զարգացած երկրներն ապահովում են իրենց համախառն ներքին արդյունքի աճի զգալի մասը:

Հայաստանի Հանրապետությունում ավանդաբար գոյություն է ունեցել բարձրագույն կրթություն ստանալու հասարակական բարձր պահանջարկ: Ներկայումս, առավել քան երբևիցե բնակչությունը, դիտարկում է կրթությունը որպես նյութական բարեկեցություն, սոցիալական կարգավիճակ, շարժունություն ապահովող հիմնական միջոց:

Հասարակության մեջ ձևավորվել է կայուն մոտեցում կրթությանը՝ որպես կապիտալի ներդրման առավել հեռանկարային և շահութաբեր մի ոլորտի: Կրթական ծախսերը բնակչությունն արդեն ընդունում է որպես այլընտրանք չունեցող անհրաժեշտություն և անխուսափելիություն:

Բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակը և վիճակը բնութագրող մի շարք ցուցանիշներ կան: Կարող ենք առանձնացնել՝ բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների բաժինը, բուհերում ուսանողների ընդհանուր քանակը, ուսանողների քանակը բնակչության մեջ, կրթական ծառայությունների արտահանման մակարդակը, տասը հազար բնակչի հաշվով ուսանողների քանակը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման աստիճանը, մեկ դասախոսի հաշվով ուսանողների քանակը: Այս ցուցանիշներով աշխարհում առաջատարներն են՝[1]

- ըստ բարձրագույն կրթությամբ բնակչության բաժնի՝ ԱՄՆ-ը 30%, Հոլանդիան 28%, Կանադան 23%, Ավստրալիան 23%,
- ըստ բուհերում ուսանողների քանակի՝ ԱՄՆ-ը՝ 13,2 մլն, Հնդկաստանը՝ 11,8 մլն, Չինաստանը՝ 10,8 մլն, Ռուսաստանը՝ 6,9 մլն,
- ըստ բնակչության մեջ ուսանողների քանակի Ֆինլանդիան 5.6 %, Լեհաստանը՝ 5,4%, Ռուսաստանը՝ 4.8%, ԱՄՆ-ը՝ 4,4%:

[1] Показатели уровня образования в странах мира: анализ данных международной статистики. Карпенко О.М., Бершадская М.Д., Вознесенская Ю.А. «Социология образования», 2008, 6, с. 4-20

Աշխարհի համալսարանների միջազգային վարկանիշներում առաջատարներն են ԱՄՆ-ը և Անգլիան, իսկ կրթական ծառայությունների արտահանման ծավալներով՝ ԱՄՆ-ը (այլ երկրներից զգալի տարբերությամբ), Անգլիան, Գերմանիան:

Ընդ որում, ԱՄՆ-ը զգալիորեն գերազանցում է այլ երկրներին գրեթե բոլոր ցուցանիշներով:

Մեր հանրապետությունում մասնագիտական կադրերի պատրաստումը՝

- իրականացնում են պետական և ոչ պետական բուհերը, որոնց ընդհանուր թիվը հասնում է 65-ի, այդ թվում՝ պետական բուհերինը՝ 23,
- բուհերում սովորողների ընդհանուր քանակն աճել է՝ կազմելով 2012–2013 ուս.տարում 90,1 հազ. մարդ, տասը հազ. բնակչի հաշվով ուսանողների քանակը կազմում է 291, ՏՀԶԿ երկրներում՝ 300–400:
- ուսանողները բնակչության ընդհանուր քանակի 2,7%-ն են:

Մասնագետների պատրաստում հիմնականում իրականացնում են պետական բուհերը, որտեղ սովորում է ուսանողների հիմնական մասը՝ շուրջ 86%-ը:

Աղյուսակ 1

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները2 (պետական, ոչ պետական)

Ուս. տարի	*Բուհերի ընդհանուր թիվը*	*Ուսանողների ընդհանուր քանակը (հազ. մարդ)*	*Տասը հազ. բնակչի հաշվով թվաքանակը*	*Բնակչության ընդհանուր քանակի նկատմամբ (%)*
1998–1999	98	59,7	157,2	1,57
1999–2000	97	61,7	162,2	1,62
2000–2001	86	60,7	159,6	1,60
2001–2002	86	65,6	172,6	1,73
2002–2003	88	72,3	225,2	2,2
2003–2004	89	77,9	242,7	2,4
2004–2005	88	85,1	264,8	2,6
2005–2006	87	97,8	303,7	3,0
2006–2007	84	105,8	328,3	3,3
2007–2008	85	112,2	347,5	3.5
2008–2009	90	114,4	353,3	3.5
2009–2010	77	114,6	352,8	3.5
2010–2011	68	111,0	340,2	3,4
2011–2012	65	95,3	291,6	2,9
2012–2013	65	90,1	290,8	2,7

[2] ՀՀ սոցիալական վիճակը, Տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2012, էջ125



Գծապատկեր 1

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները (պետական, ոչ պետական)

Աղյուսակ 2

ՀՀ բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները[3]

Ուս. տարի	*Ուսանողների ընդհանուր քանակը (հազ. մարդ)*	*Բուհերում սովորողների ընդհանուր քանակի նկատմամբ (%)*	*Պետական բուհերի թիվը*
1998–1999	38,5	64,5	14
1999–2000	39,8	65,6	15
2000–2001	43,6	71,8	15
2001–2002	47,4	72,3	15
2002–2003	54,1	74,8	16
2003–2004	55,9	71,8	16
2004–2005	62,5	73,4	20
2005–2006	73,7	75,4	20
2006–2007	81,4	76,9	20
2007–2008	86,7	77,3	23
2008–2009	89,6	78,3	23
2009–2010	91,9	80,2	23
2010–2011	91,4	82,3	23
2011–2012	80,4	84,4	23
2012–2013	76,7	85,1	23

[3] ՀՀ սոցիալական վիճակը, 2011, 2010, 2009 թթ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 155,127,137:



Գծապատկեր 2

ՀՀ բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները

Աղյուսակ 3

ՀՀ բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները[4]

Ուս. տարի	*Ոչ պետական բուհերի թիվը*	*Դրանցում ուսանողների թվաքանակը (հազ. մարդ)*	*Բուհերում սովորողների ընդհանուր թվաքանակից (%)*
1997–1998	87	20,2	35,9
1998–1999	84	21,2	35,5
1999–2000	82	21,9	34,4
2000–2001	71	17,1	28,2
2001–2002	71	18,2	27,7
2002–2003	72	18,2	25,2
2003–2004	73	22,0	28,2
2004–2005	68	22,6	26,6
2005–2006	67	24,0	24,6
2006–2007	64	24,4	30,0
2007–2008	62	25,5	22,3
2008–2009	67	24,8	21,7
2009–2010	54	22,7	19,8
2010–2011	51	19,6	17,6
2011–2012	45	14,9	15,6
2012–2013	42	13,4	14,9

[4] ՀՀ սոցիալական վիճակը 2008, 2009, 2011, 2012, 2013 թ.,ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան,էջ109,137, 141,168:

Վերջին տարիներին ՀՀ-ում, ինչպես և նախկին խորհրդային բոլոր հանրապետություններում, ակտիվորեն զարգանում է ոչ պետական մասնագիտական կրթության համակարգը: Ընդ որում, եթե սկզբնական շրջանում տեղի էր ունենում դրանց կտրուկ աճ՝ 2008–2009 թթ. կազմելով 87, ապա այնուհետև սկսեց կրճատվել, հասնելով 2012–2013 թթ. 42-ի, կազմելով բուհերում սովորող ուսանողների ընդհանուր թվաքանակի շուրջ 15% կամ 13,5 հազ.: Ներկայումս, միջին հաշվով մեկ ոչ պետական բուհում սովորող ուսանողների քանակը 319,0 մարդ է, այն դեպքում, երբ պետական բուհերում՝ 3913,0, շուրջ 12 անգամ ավելին:



Գծապատկեր 3

ՀՀ բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները

Հանրապետությունում տեղի է ունեցել պետական բուհերում վճարովի ուսուցման ծավալի աճ: Այսպես, եթե 1998–1999 ուս. տարում պետական բուհերի վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված է եղել 20,5 հազ. մարդ, ապա 2012–2013 ուս. տարում՝ 64,9 հազ. մարդ, կամ աճել է շուրջ 3 անգամ: Ներկայումս պետական բուհական համակարգում սովորողների 84,6%-ը սովորում է վճարովի հիմունքներով[5]: Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ ներկայում հանրապետությունում վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված է 78,3 հազ. մարդ կամ սովորողների ընդհանուր քանակի շուրջ 87,0%-ը:

[5] ՀՀ սոցիալական վիճակը 2011,2013 թթ., Տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, էջ130, 232:

Աղյուսակ 4

ՀՀ բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների ուսանողների բաշխվածությունը վճարովի և անվճար ուսուցման համակարգերում[6]

Ուս. տարի	*Ընդհանուր քանակը (հազ. մարդ)*	*Վճարովի*		*Անվճար*	
		քանակը (հազ. մարդ)	*տոկոսը*	*քանակը (հազ. մարդ)*	*տոկոսը*
1998–1999	38,5	20,5	53,1	18,1	46,9
1999–2000	39,8	23,2	58,4	16,5	41,6
2000–2001	43,6	26,2	60,0	17,4	40,0
2001–2002	47,4	30,4	64,1	17,0	35,9
2002–2003	54,1	35,3	65,4	18,7	34,6
2003–2004	55,9	36,7	65,7	19,2	34,3
2004–2005	62,5	42,8	68,5	19,7	31,5
2005–2006	73,7	53,8	73,0	19,9	27,0
2006–2007	81,4	61,4	75,4	20,0	24,6
2007–2008	86,7	66,7	76,9	20,0	23,1
2008–2009	89,6	70,7	79,0	18,8	21,1
2009–2010	91,9	72,9	79,4	18,9	20,6
2010–2011	91,4	72,8	79,6	18,6	20,4
2011–2012	80,4	66,2	82,4	14,2	17,6
2012–2013	76,7	64,9	84,6	11,8	15,4



Գծապատկեր 4

ՀՀ բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների ուսանողների բաշխվածությունը վճարովի և անվճար ուսուցման համակարգերում

[6] ՀՀ սոցիալական վիճակը 2011,2013 թթ., Տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան,էջ 130, 232:

Այսպիսով, հայաստանյան հանրությունը բախվում է այնպիսի լուրջ խնդիրների, ինչպիսիք են՝

- կրթության մատչելիությունը,
- կրթության որակը, համապատասխանությունը աշխատանքի շուկայի պահանջներին և համաշխարհային ստանդարտներին,
- բնակչության զգալի մասի ցածր վճարունակությունը:

Աղյուսակ 5

ՀՀ բարձրագույն պետական ուսումնական հաստատություններում սովորողների կառուցվածքը՝ ըստ մասնագիտական խմբերի[7] (%)

Ուս. տարի	*Արդյունաբերություն և շինարարություն*	*Գյուղատնտեսություն*	*Տնտեսագիտություն*	*Հումանիտար գիտություններ և իրավագիտություն*	*Մանկավարժություն*	*Առողջապահություն և սպորտ*	*Այլ*
2000–2001	15,9	3,5	19,1	2,9	13,2	9,4	36,0
2001–2002	12,3	2,8	19,9	11,0	16,7	8,3	29,0
2002–2003	8,0	2,3	23,0	10,0	16,4	7,6	32,7
2003–2004	8,1	3,3	24,3	3,5	16,5	7,8	36,5
2004–2005	9,1	3,2	25,3	4,0	16,5	8,5	33,4
2005–2006	7,9	4,2	12,9	4,5	19,4	7,2	43,9
2006–2007	7,9	6,1	14,6	4,7	14,1	18,4	25,4
2007–2008	6,2	7,7	17,0	10.0	20,0	16,3	18,4
2008–2009	6,7	8,4	14,9	9,3	26,7	4,8	23,5
2009–2010	8,0	8,6	16,8	29,4	15,5	5,5	16,1
2010–2011	7,2	8,0	17,9	32,5	8,7	5,6	20,0
2011–2012	5,6	8,8	18,6	32,3	10,1	5,6	19,3
2012–2013	5,8	8,4	18,4	32,6	8,1	6,1	20,2

Հանրապետությունում մասնագետների պատրաստումն իրականացվում է ըստ մի շարք մասնագիտությունների: Հիմնական մասը հումանիտար գիտությունների և իրավագիտության գծով են՝ 32,6%, տնտեսագիտության՝ 18,4%, մանկավարժության՝ 8,1% և գյուղատնտեսության՝ 8,4%[8]: Դիտվում է նաև կայուն միտում արդյունաբերության և շինարարության, ինչպես նաև առողջապահության և սպորտի գծով մասնագետների պատրաստման կրճատման: Ընդ որում, արդյունաբերության և շինարարության մեջ ընդգրկված են բոլոր տեխնիկական և ճարտարագիտական բնույթի մասնագիտությունները: Տնտեսագիտության գծով վիճակը կայուն է. կարելի ասել, որ

[7] ՀՀ սոցիալական վիճակը 2011,2013 թթ., Տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, էջ 132,133,134:
[8] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, էջ 234:

այս մասնագետների նկատմամբ շուկայում կա կայուն պահանջարկ: Գյուղատնտեսության գծով մասնագետների պատրաստումը մի փոքր ավելացել է, աճել է նաև հումանիտար գիտությունների և իրավագիտության գծով մասնագետների պատրաստումը, իսկ մանկավարժության գծով հակառակը՝ նվազել:

Պետք է նշել, որ շուկայում առավել պահանջարկ վայելող մասնագիտությունների ընդլայնման միտումը բացասաբար է անդրադառնում աշխատանքի շուկայի հավասարակշռության վրա, առաջացնում բարձրագույն կրթությամբ կադրերի ավելցուկ որոշ մասնագիտությունների և պակաս՝ մյուսների գծով: Այսինքն՝ կրթական ծառայությունների և աշխատանքի շուկայի միջև փոխկապվածությունը հաճախ չի արտացոլում իրական վիճակը: Այստեղ հատկանշականն այն է, որ կրթական ծառայությունների շուկայի գործունեությունն ուղղված է ինչպես աշխատանքի, այնպես էլ կրթական շուկայի պահանջների բավարարմանը: Սովորողները և գործատուները հաճախ ներկայացնում են տարբեր պահանջներ առանձին մասնագիտությունների նկատմամբ: Կրթական ծառայությունների համար վճար կատարում է միջանկյալ սպառողը՝ ուսանողը, ուստի այդ ծառայությունները մատուցող սուբյեկտների գործունեությունն ուղղված է հիմնականում հենց այդ օղակի պահանջների բավարարմանը, որը հաճախ ի վիճակի չէ իրականապես գնահատելու աշխատանքի շուկայի վիճակը և զարգացման միտումները: Բացի դրանից, գոյություն ունի կրթական ծառայությունների շուկայի առաջարկի և աշխատանքի շուկայի պահանջարկի ժամանակային խզում: Այսպիսով, առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջում է համապատասխան հետազոտություններ:

Բարձրագույն մասնագիտական կրթության վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներ են պրոֆեսորադասախոսական կազմը, նրա որակավորման աստիճանը և մեկ դասախոսի հաշվով ուսանողների քանակը: Մեր հանրապետությունում ներկայումս հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմը պետական բուհերում կազմում է 7528, իսկ ոչ պետական բուհերում՝ 828, կամ 9 անգամ պակաս: Իսկ մեկ դասախոսի հաշվով ուսանողների քանակը ներկայումս կազմում է պետական բուհերում 12,0, ոչ պետական բուհերում՝ 16,7: Բարձրագույն կրթության ոչ պետական ոլորտում այս ցուցանիշն ամենաբարձրն է ԱՄՆ-ում՝ 19,4, իսկ ցածրը՝ Իտալիայում՝ 6,3: Պետական ոլորտում, համապատասխանաբար՝ Իսպանիայում՝ 21,5 և Ավստրալիայում՝ 5,7[9]:

[9] Галаган А. И. Анализ преподавательского, вспомогательного и административного персонала в системах образования зарубежных стран // Социально-гуманитарные знания, N 5, 2010, с. 45.

Աղյուսակ 6

ՀՀ բուհերում պրոֆեսորադասախոսական անձնակազմի հիմնական ցուցանիշները[10] (մարդ)

Ուս. տարի	*Պրոֆեսորադասախոսական անձնակազմը (հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմ)*		*Ուսանողների քանակը՝ մեկ դասախոսի հաշվով*	
	պետական բուհերում	*ոչ պետական բուհերում*	*պետական բուհերում*	*ոչ պետական բուհերում*
1998–1999	4420	*	8.7	*
1999–2000	6122	4113	6.5	5.3
2000–2001	7623	4020	5.7	4.3
2001–2002	7904	3350	6.0	5.4
2002–2003	8495	3292	6,4	5,5
2003–2004	8975	3186	6,2	6,9
2004–2005	9390	3069	6,7	7,4
2005–2006	9763	3018	7,6	8,0
2006–2007	9849	2672	8,3	9,1
2007–2008	7321	1173	15,4	21,2
2008–2009	7148	967	16,1	24,8
2009–2010	7418	978	15,5	22,7
2010–2011	7710	1133	14,4	17,8
2011–2012	8201	921	11,6	16,6
2012–2013	7528	828	12,0	16,7

* տվյալները բացակայում են:

Ոչ պետական բուհերում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընդհանուր քանակը ուսումնասիրվող ժամանակաշրջանում կրճատվել է, ի տարբերություն պետական բուհերի, որտեղ տարեց տարի ավելացել է, միաժամանակ՝ ավելացել է ուսանողների քանակը մեկ դասախոսի հաշվով ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածում: Եթե նախկինում մեկ դասախոսի հաշվով ուսանողների քանակի ցուցանիշը երկրի բարձրագույն կրթության համակարգը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից էր, ապա այժմ աշխարհի զարգացած երկրներում տեղի են ունենում զգալի փոփոխություններ, հատկապես՝ կրթական տեխնոլոգիաների ոլորտում: Այսպես, վերը նշված նորմերը զգալիորեն բարձրացվել են, և ներկայումս ավելի կարևորվում են բոլորովին այլ կարգի չափանիշներ և նորմեր, մասնավորապես՝ ապահովվածությունը համակարգչային տեխնիկայով, ժամանակակից հեռահաղորդակցության միջոցներով կամ գրադարանային ֆոնդով և այլն:

[10] ՀՀ սոցիալական վիճակը 2011, 2013, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, էջ 106, 111–116:

Հայաստանի միջին բուհում ուսանող/դասախոս գործակիցը կազմում է 9.4, ՏԶՀԿ երկրներում ուսանող/դասախոս միջին ցուցանիշը 15 է:

Ներկայումս հանրապետության պետական բուհերում աշխատողների շուրջ 24,4%-ը ունի գիտության թեկնածուի գիտական աստիճան, ոչ պետական բուհերում՝ 35,8 %-ը, դոցենտի կոչում՝ պետական բուհերում՝ 16,6%-ը, ոչ պետական՝ 18,8%-ը: Դոկտորի կոչում ունեցողները պետական բուհերում կազմում են 5,7%-ը, պրոֆեսորի՝ 5,7%-ը, ոչ պետական բուհերում՝ դոկտորնեի՝ 5,6%, պրոֆեսորի՝ 5,6%: Ընդ որում, եթե պետական բուհերում հիմնական հաստիքային աշխատողների տեսակարար կշիռը կազմում է 74,3%, ապա ոչ պետական բուհերում՝ 50,4%[11] : Միաժամանակ՝ ՀՀ բուհական համակարգի դասավանդող անձնակազմի հիմնական աշխատողների զգալի մասն ընդգրկված է պետական համակարգում, և այն միտում ունի բարձրանալու, այսպես՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում աճել է՝ կազմելով ընդհանուր թվաքանակի 86,2%–90,1% [12]: Այսինքն՝ դասախոսական անձնակազմի համար նախընտրելի է աշխատանքը պետական բուհերում, ինչը պայմանավորված է ավելի բարձր աշխատավարձով և ավելի կայուն աշխատանքի երաշխիքով:

Աղյուսակ 7

ՀՀ բուհերում պրոֆեսորադասախոսական անձնակազմի բաշխվածությունը

	Ընդամենը բուհական համակարգում (մարդ)	*Պետական բուհեր %*	*Ոչ պետական բուհեր %*
2007–2008	8494	86,2	13,8
2008–2009	8115	88,1	11,9
2009–2010	8396	88,3	11,7
2010–2011	8843	87,2	12,8
2011–2012	9122	89,9	10,1
2012–2013	8356	90,1	9,9

Ներկայումս համակարգի ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում ուսման վարձերից: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ ֆինանսավորման աղբյուրների հայթայթումը և կրթական ծառայության համար վճարվող գումարի չափը՝ լուրջ խնդիր է բնակչության հիմնական մասի համար: Ուստի և ուսման վարձերի ձևավորման հիմնախնդիրը առանցքային է, ինչպես հասարակության և առանձին անհատի, այնպես էլ բուհերի համար:

[11] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-մարտ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2012, էջ 234, 236:
[12] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-մարտ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2012, էջ 234, 236, 237:

Այստեղ հստակեցման կարիք ունի օրենսդրական դաշտը, քանի որ օրենսդրորեն սահմանված չէ «վճարովի կրթական ծառայություն» հասկացությունը, ինչպես նաև պարզված չեն դրա նկատմամբ գնի սահմանման կարգը և կարգավորման մեխանիզմները:

Այժմ բուհերը, ըստ էության, ինքնուրույն են որոշում գների մակարդակն իրենց կրթական ծառայությունների համար: Գործող օրենսդրության մեջ սա կարգավորված չէ: Նշվում է, որ բուհերը առևտրային կազմակերպություններ չեն, հետևաբար՝ չեն հետապնդում շահույթ ստանալու նպատակ (ՀՀ օրենքը ՊՈԱԿ-ի մասին, հոդված 3): Սակայն ակնհայտ է, որ կրթական ծառայության գինը պետք է ոչ միայն ծածկի կրթական ծառայության մատուցման հետ կապված ծախսերը, այլ նաև ապահովի որոշակի միջոցների ստացում, որոնք ուղղվեն կրթական հիմնարկության նյութական և ուսումնամեթոդական բազայի զարգացմանը, այսինքն՝ անհրաժեշտ է ապահովել եկամուտների և ծախսերի դրական տարբերություն:

Ընդհանուր առմամբ, բուհերն ու կառավարությունը կիսում են համակարգի կառավարումը, սակայն կողմերի պատասխանատվությունը հստակեցման կարիք ունի, ձևակերպումները խճճված են, երբեմն՝ անորոշ և իրար հակասող:

Այսպիսով, կրթական ծառայությունների առանցքային հիմնախնդիրներից է դրանց գնի սահմանումը, ինչը բարդ և բազմագործոն գործընթաց է, պետք է բավարարի ինչպես ծառայություն մատուցողին, այնպես էլ գնորդին: Կրթական ծառայությունների գնի սահմանումը և նրա հիմնավորվածությունը բուհի կարևորագույն հիմնախնդիրներից է, հետևաբար կարևոր են գնագոյացման մեթոդաբանական մոտեցումները կրթական ոլորտում: Այդ հիմնախնդրի արդիականությունը մեծանում է՝ պայմանավորված այստեղ մրցակցության ուժեղացմամբ, ժողովրդագրական իրավիճակի փոփոխմամբ, բյուջետային ֆինանսավորման կրճատմամբ, բնակչության ցածր վճարունակությամբ:

Ներկայումս բուհերից ոչ մեկում գոյություն չունի ուսման վարձի հաշվարկման հստակ մեթոդաբանություն, չի կատարվում մեկ ուսանողի վրա կատարվող ծախսերի հաշվարկ: Բացի դրանից բուհերում առկա է ուսման վարձերի գնային լայն շերտավորում, այդ թվում՝ նույն մասնագիտությունների և ուսուցման նույն տևողության դեպքում:

Գնագոյացման հարցում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, բուհերն օգտագործում են տարբեր մեթոդներ: Հիմնականը ծախսայիններն են, որոնք հիմնված են կրթական ծառայության ինքնարժեքի հաշվարկի վրա՝ ավելացնելով դրան նախատեսված որոշակի վերադիր ծախսեր: Ինքնարժեքը ներառում է ուղղակի և անուղղակի ծախսերը, ինչպես նաև որակի ապահովման համար նորմատիվային գործակիցները: Վերադիրը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտության հանդեպ բուհերի՝ կանխատեսվող պա-

հանջարկից և մրցակից բուհերի՝ նույնանման մասնագիտությունների համար սահմանած գներից, բնակչության վճարունակությունից: Հաշվի են առնվում նաև շուկայում բուհի մրցակցային վարքագիծը, ինչպես նաև շուկայի այլ սուբյեկտների վարքագծերը:

Այս մեթոդն առավել պարզ է՝ գնի սահմանման համար ամբողջ տեղեկատվությունը հնարավոր է ստանալ բուհի ներսում, համապատասխան հաշվապահական փաստաթղթերից, սակայն ունի թերություններ. այսպես՝

- գնի սահմանման ժամանակ հաշվի չի առնվում շուկայում ձևավորված պահանջարկն առաջարկվող կրթական ծառայության նկատմամբ,
- հաշվարկված գինը չի արտացոլում կրթական ծառայության օգտակարության աստիճանը սպառողի համար,
- բարդ խնդիր է շահույթի նորմայի պլանավորման հարցը:

Փաստորեն, դա առաջարկի գնի հաշվարկն է, այսինքն՝ այն գնի, որը շուկայում առաջարկում է ծառայություն մատուցող սուբյեկտը, և որից ցածր նա չի կարող առաջարկել:

Գնագոյացմանը հնարավոր է ցուցաբերել նաև սկզբունքորեն այլ մոտեցում՝ կատարել առաջարկվող ծառայության օգտակարության գնահատում: Այս դեպքում բարդությունն այն է, որ սպառողները հաճախ չեն կարող օբյեկտիվորեն գնահատել ծառայության օգտակարության աստիճանը, ինչը պայմանավորված է դրա յուրահատկություններով, հատկապես՝ անհրաժեշտ տեղեկատվության բացակայությամբ, գնահատման մեթոդաբանությանն անտեղյակությամբ և այլն: Փաստորեն, դա այն առավելագույն գինն է, որ սպառողը գտնում է նպատակահարմար և պատրաստ է վճարել, այլ կերպ ասած՝ պահանջարկի գինը: Համապատասխանաբար՝ առաջադրվում են երկու տեսակի գներ: Առաջարկի և պահանջարկի գների համապատասխանությունը գործնականում բավական դժվար է ապահովել:

Կրթական ծառայությունների շուկայում այժմ գերակշռող է առաջարկի գինը, սակայն շուկայի հավասարակշռության համար, կարծում ենք, գինը պետք է հաշվի առնի նաև շուկայի մյուս սուբյեկտի՝ սպառողի շահերը: Այս նպատակով անհրաժեշտ է մշակել պահանջարկի գնի որոշման հստակ մեթոդաբանություն: Դրանից ելնելով՝ մենք կրթական ծառայությունների ստացման ծախսերը դիտարկել ենք որպես ներդրումներ՝ ներդրումներ մարդկային կապիտալում, որոնք իրականացվում են ապագայում եկամուտներ ստանալու նպատակով: Իհարկե, կարելի է պատկերացնել նաև այլ մոտեցումներ, սակայն այս դեպքում հաշվարկի իրականացումը, մեր կարծիքով, ավելի իրական է:

Նման մոտեցման դեպքում հնարավոր է հաշվարկել պահանջարկի գինը կամ այն գումարը, որը կրթական ծառայության սպառողները համարում են նպատակահարմար և պատրաստ են վճարելու:

Այսինքն՝ ներկայումս առավել արդիական է դառնում, կարծում ենք, կրթության որոշակի տեսակի ստացման ֆինանսական նպատակահարմարության գնահատումն ու հիմնավորումը: Նման մոտեցման դեպքում առաջանում է ոլորտին ուղղվող միջոցների տնտեսական գնահատման անհրաժեշտություն: Որոշումների ընդունման հիմքում դրվել է դրանց նկատմամբ մոտեցումը բացառապես ներդրումային գործունեության արդյունավետության տեսանկյունից:

Այս որոշումների ընդունման հիմքում, առաջին հերթին, ենթադրվող ներդրումների ծավալի, այսինքն՝ պահանջվող ծախսերի և ապագա դրամական մուտքերի գնահատումն ու համադրումն է: Ցուցանիշների համադրումը տեղի է ունենում տարբեր ժամանակահատվածների համար, ուստի ժամանակի գործոնը հաշվի է առնվում ծախսերի և եկամուտների դիսկոնտավորմամբ: Առաջարկվող մոտեցման հիմքում դրվել է փոխհատուցման ժամկետը, սակայն դրա միջոցով հնարավոր չէ պատշաճ կերպով գնահատել աճող կամ նվազող դրամական մուտքերով նախագծերը, ինչը հատկապես բնորոշ է կրթական ծրագրերին:

Կրթական ծառայության սպառողների՝ այդ նպատակով կատարվող ծախսերը ներկայացվել են որպես կանխատեսվող եկամուտների և տնտեսական արդյունքի (շահույթի) տարբերություն (դիսկոնտավորման միջոցով հաշվարկված ներկա պահի դրությամբ), ընդ որում, հիմք է ընդունվել, որ այդ արդյունքը հավասար է 0, քանի որ մեր նպատակն է որոշել ծախսերի այն մեծությունը, երբ տեղի է ունենում դրանց փոխհատուցում: Այս նպատակով առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$\sum_{t=0}^{n} \frac{R_t}{(1+r)^t} = \sum_{t=0}^{n} \frac{D_t}{(1+r)^t} - P_b ,$$

որտեղ՝ P_b - ն՝ արդյունքի ապագա հոսքերի բերված արժեքն է,
D_t - ն՝ t-րդ ժամանակահատվածում ստացվող եկամուտն է,
R_t - ն՝ t-րդ ժամանակահատվածում կատարված ծախսերն են,
n-ն՝ ժամանակահատվածների թիվը,
r-ն՝ դիսկոնտավորման տոկոսադրույքի չափն է: Այն դեպքում, երբ տեղի է ունենում փոխհատուցում, կատարված ծախսերը և եկամուտները հավասարակշռվում են, այսինքն՝ $P_b = 0$:

Այս խնդրի լուծման նպատակով մենք առաջարկել է մոդիֆիկացնել փոխհատուցման ժամկետի հաշվարկը, ինչը թույլ կտա հաշվի առնելու եկամուտների ոչ գծային բնույթը ժամանակի ընթացքում: Այս նպատակով, HTML, JavaScript միջոցներով մշակվել է ծրագիր, որի միջոցով հնարավոր է ավտոմատացնել ներդրումային նախագծի արդյունավետության հաշվարկը, տվյալ դեպքում՝ բարձրագույն կրթության ստացման գնահատման: Ծրա-

գիրն օգտագործում է եկամուտների ապագա հոսքերի և կատարված ծախսերի բերված արժեքի բանաձևը: Այս մեթոդը հնարավորություն է ընձեռում համապատասխան ալգորիթմով որոշել ներդրումային նախագծի փոխհատուցման ժամկետը՝ հաշվի առնելով ժամանակի ընթացքում եկամուտների ստացման ոչ գծային բնույթը: Մշակված մեթոդը հնարավորություն է տալիս նաև ավտոմատացնելու ներդրումային նախագծի գնահատման գործընթացը, տվյալ դեպքում՝ բարձրագույն կրթության ստացման արդյունավետության հաշվարկը: Դրա շնորհիվ հնարավոր է կատարել կրթություն ստանալու արդյունավետության և ֆինանսական նպատակահարմարության հաշվարկներ մի շարք մասնագիտությունների համար՝ ըստ տնտեսական գործունեության տեսակի: Կատարված հաշվարկները հնարավորություն են ընձեռում ավելի ճշգրիտ գնահատելու ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրները, ինչպես նաև նոր մոտեցում ցուցաբերելու մի շարք այլ հարցերին, հատկապես ուսման վարձերի սահմանման առումով:

Առաջարկվող ծրագրով հաշվարկի տեսքը հետևյալն է՝



Այստեղ կարևորվում է դիսկոնտավորման տոկոսադրույքի ընտրության հարցը: Որպես այդպիսին կարող է առաջարկվել երկու տարբերակ և երկու մոտեցում: Առաջին դեպքում որպես դիսկոնտավորման տոկոսադրույք ընդունվել է ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որը սահմանված է 8 տոկոս, այսինքն՝ ֆինանսական շուկայի նվազագույն տոկոսադրույքը, որը կողմնորոշիչ է ներդրումների իրականացման և որոշումների ընդունման համար: Այստեղ մոտեցումն այն է, որ ներդրում է կատարվում մարդկային կապիտալում, կրթությունը դիտարկվում է որպես ներդրումային գործունեու-

թյան մի տեսակ, և առկա են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Կատարվող հաշվարկը ներդրումային նախագիծն ընտրելու միջոց է: Փաստորեն, այս դեպքում գործ ունենք վճարունակ սուբյեկտների հետ:

Մյուս դեպքում մի իրավիճակ է, երբ առկա է կրթություն ստանալու ցանկություն, սակայն բացակայում են անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Այս դեպքում գործ ունենք անվճարունակ սուբյեկտների հետ: Հետևաբար, առաջանում է ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն: Հաշվարկներն իրականացնելիս՝ ելնում ենք այն միջինացված տոկոսադրույքից, որի դիմաց հնարավոր է ներգրավել միջոցներ ՀՀ փոխատվական կապիտալի շուկայից: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ որպես այդպիսին կարելի է ընդունել 18 տոկոսը:

Հաշվարկներում օգտագործվել են համապատասխան ոլորտների միջին տարեկան եկամտից կիսով չափ ցածր տվյալներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուհի շրջանավարտների աշխատավարձն աշխատանքի սկզբնական տարիներին կլինի միջինից բավական ցածր. մենք ընդունել ենք, որ այն կկազմի միջինի կեսը: Դրանից ելնելով՝ հնարավոր է կատարել բարձրագույն կրթության համար ծախսերի ֆինանսական նպատակահարմարության հաշվարկներ՝ ըստ մասնագիտությունների, ապա՝ դրա հիման վրա կատարել գնահատումներ:

Կատարված հաշվարկների հիման վրա որոշումների ընդունման հիմքում դրվել է դրանց նկատմամբ մոտեցումը միայն ներդրումային գործունեության արդյունավետության տեսանկյունից: Առաջին տարբերակի դեպքում, ըստ կատարված հաշվարկների, բարձրագույն կրթության ծախսերը գրեթե բոլոր դիտարկվող մասնագիտությունների համար կարող են համարվել ֆինանսապես նպատակահարմար, քանի որ արդյունավետությունը գերազանցում է դրանց նորմատիվային արժեքը՝ բացառությամբ անշարժ գույքին առնչվող գործունեությունը և սպասարկումը: Այս տարբերակի դեպքում կատարվող ծախսերը ֆինանսապես նպատակահարմար են և արդյունավետ մի շարք մասնագիտությունների համար: Դրանք են՝ ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն մասնագիտությունների գծով, գյուղատնտեսությունը, կրթությունը, հանքագործական արդյունաբերությունը, մշակող արդյունաբերությունը, շինարարությունը, գործունեությունը մեծածախ և մանրածախ առևտրում, տեղեկատվությունը և կապը, մշակույթը: Ընդ որում՝ այս տարբերակի դեպքում ծախսերը անարդյունավետ են միայն առողջապահության համար: Ճիշտ է, պահանջարկի և առաջարկի գների տարբերությունը, ըստ գործունեության տեսակների, շատ տարբեր է: Առավել մեծ է ֆինանսական և ապահովագրական գործունեության, պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն, հանքագործական արդյունաբերություն, մշակող ար-

դյունաբերություն, շինարարություն, տեղեկատվություն և կապ գործունեության տեսակների համար:

Երկրորդ տարբերակի դեպքում ֆինանսապես նպատակահարմար է միայն հանքագործական արդյունաբերությունը, դրան մոտենում են նաև ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, տեղեկատվությունն ու կապը: Իսկ գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են առողջապահությունը, սպասարկում և այլ ծառայություններ, անշարժ գույքի հետ կապված գործունեությունն ընդհանրապես կարող են համարվել անարդյունավետ, քանի որ կատարված ծախսերը չեն փոխհատուցվում ամբողջ աշխատունակ կյանքի ընթացքում: Այդ իրավիճակը պետք է հաշվի առնվի գնագոյացման ժամանակ: Միաժամանակ, այդ մասնագիտությունները խիստ անհրաժեշտ են և, հետևաբար, այստեղ առաջանում են լուծում պահանջող տարբեր կարգի խնդիրներ:

Պահանջարկի և առաջարկի գների միջև տարբերությունը ֆինանսավորելու համար առավել նպատակահարմար է հաշվարկել այն տոկոսադրույքը, որի դիմաց միջոցների ներգրավման դեպքում ծախսերը կլինեն ֆինանսապես նպատակահարմար և արդյունավետ, այսինքն՝ կտեղավորվեն նորմատիվային ժամկետում: Այս նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ և պայմաններ:

Ընդհանուր առմամբ, կրթական ծախսերը կարելի է համարել շատ արդյունավետ, քանի որ ծախսերի փոխհատուցումից հետո ամբողջ աշխատունակ կյանքի ընթացքում տեղի է ունենում դրամական հոսքերի մուտք: Ներկայացված հաշվարկները թույլ են տալիս ճշգրտելու բուհի առաջարկված գինը, բացահայտելու դրա փոփոխման միտումները, ճիշտ կողմնորոշվելու կրթական ծառայությունների շուկայում ներդրումներ իրականացնելիս՝ կրթության տարբեր ձևերի և տեսակների, դրանք առաջարկող սուբյեկտների միջև: Բացի դրանից, հնարավորություն է առաջանում նաև վերանայել վարձատրությանն առնչվող տարբեր բնույթի հարցեր: Առաջարկված մոտեցումների հիման վրա կարելի է նաև հաշվարկել ըստ մասնագիտությունների ուսման վարձերի չափը:

1. Կրթությունը բնակչությունը դիտարկում է որպես՝
   - նյութական բարեկեցությունը, շարժունությունը և սոցիալական կարգավիճակն ապահովող հիմնական միջոց:
   - գոյություն ունի բարձրագույն կրթություն ստանալու սոցիալական բարձր պահանջարկ:
   - կրթական ծախսերը բնակչությունն ընդունում է որպես անհրաժեշտություն:
2. Հասարակությունը բախվում է այնպիսի լուրջ խնդիրների, ինչպիսիք են՝
   - կրթության մատչելիությունը,
   - կրթության որակը, նրա համապատասխանությունը աշխատանքի շուկայի պահանջներին և համաշխարհային ստանդարտներին,
   - բնակչության զգալի մասի ցածր վճարունակությունը:

3. Ներկայումս համակարգի ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում ուսման վարձերից:

4. Աշխատանքի և կրթական ծառայությունների շուկայի միջև առկա են մի շարք հակասություններ, որոնց լուծումը պահանջում է համապատասխան հետազոտություններ:

5. Գնագոյացման հիմնախնդիրն առանցքային է՝ ինչպես հասարակության, առանձին անհատի, այնպես էլ բուհերի համար:

6. Ներկայումս բուհերից ոչ մեկում գոյություն չունի ուսման վարձի հաշվարկման հստակ մեթոդաբանություն, չի կատարվում մեկ ուսանողի վրա կատարվող ծախսերի հաշվարկ:

7. Այժմ շուկայում գործում է առաջարկի գինը. դա այն գինն է, որը շուկայում առաջարկում է ծառայություն մատուցող սուբյեկտը, և որից ցածր նա չի կարող առաջարկել, փաստորեն այն չի արտացոլում սպառողի շահերը, այսինքն՝ գինը հավասարակշռված չի :

8. Կրթական ծառայությունների ստացման հետ կապված ծախսերը նպատակահարմար է դիտարկվել որպես ներդրումներ, ներդրումներ մարդկային կապիտալում, որոնք իրականացվում են ապագայում եկամուտների ստացման նպատակով: Նման մոտեցման դեպքում հնարավոր է հաշվարկել պահանջարկի գինը կամ այն գումարը, որը կրթական ծառայության սպառողները համարում են նպատակահարմար և պատրաստ են վճարել:

9. Դրանից ելնելով՝ հնարավոր է կատարել բարձրագույն կրթության համար ծախսերի ֆինանսական նպատակահարմարության հաշվարկ՝ ըստ մասնագիտությունների:

10. Պահանջարկի և առաջարկի գների միջև տարբերությունը ֆինանսավորելու համար առավել նպատակահարմար է հաշվարկել այն տոկոսադրույքը, որի դիմաց միջոցների ներգրավման դեպքում ծախսերը կլինեն ֆինանսապես նպատակահարմար, այսինքն՝ կտեղավորվեն նորմատիվային ժամկետում: Այս նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ և պայմաններ:

1. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին /ընդունվել է 14.04.1999/
2. ՀՀ Սահմանադրություն
3. ՀՀ օրենքը պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին
4. ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ տալու կարգը հաստատելու մասին
5. ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին: Ընդունված է 2004թ. դեկտեմբերի 14-ին:
6. ՀՀ սոցիալական վիճակը, Տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2012, էջ125
7. ՀՀ սոցիալական վիճակը, 2011, 2010, 2009 թթ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան:
8. ՀՀ սոցիալական վիճակը 2011, 2013 թթ., Տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան:
9. Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-մարտին: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան
10. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, էջ 234
11. Егоршин А. П. Менеджмент, маркетинг и экономика образования. Нижний Новгород. Нижегородский институт менеджмента и бизнеса: 2001. стр
12. Котлер Ф. и др. Основы маркетинга, М.: 2000
13. Показатели уровня образования в странах мира: анализ данных международной статистики. Карпенко О.М., Бершадская М.Д., Вознесенская Ю.А. / / Социология образования, 2008, N 6, с. 4-20

ԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը և ոլորտի գնագոյացման հիմնախնդիրները

Մասնագիտական կադրերի և գիտելիքների ձևավորման անհրաժեշտ պայմանը բարձրագույն կրթությունն է, որի զարգացումը կարևոր ազգային առաջնայնություններից է: Խիստ արդիական է համատեղել կրթության մատչելիությունը և վճարելիությունը: Այս համատեքստում կրթական ծառայությունների գնագոյացման խնդիրը դիտարկվել է որպես առանցքային: Ներկայումս շուկայում գործում է առաջարկի գինը, այսինքն՝ այն գինի, որը շուկայում առաջարկում է ծառայություն մատուցող սուբյեկտը: Կրթական ծախսերը առաջարկվել է դիտարկել որպես ներդրումներ, ներդրումներ մարդկային կապիտալում: Այս դեպքում հնարավոր է հաշվարկել պահանջարկի գինը կամ այն գումարը, որը կրթական ծառայություն սպառողները համարում են նպատակահարմար և պատրաստ են վճարել՝ ապահովելով երկու գների հավասարակշռությունը: Դրանից ելնելով՝ կատարվել է բարձրագույն կրթության համար ծախսերի ֆինանսական նպատակահարմարության հաշվարկ՝ ըստ մասնագիտությունների, երկու տարբերակով մշակված մեթոդաբանությամբ, և կատարվել է դրանց գնահատումը:

АННА АСЛАНЯН
доктор экономических наук, профессор

Рынок высшего профессионального образования РА и проблемы ценообразования

Необходимым условием формирования профессиональных кадров и знаний является высшее образование, являющееся важнейшим национальным приоритетом. В настоящее время необходимо обеспечить совмещение доступности образования и платежеспособности. В этом контексте вопрос ценообразования образовательных услуг рассмотрен как первоочередной. В настоящее время на рынке действует цена предложения – цена, по которой предлагают свои услуги субьекты рынка. Образовательные услуги предложено рассматривать как инвестиции, а именно вложения в человеческий капитал. В этом случае возможно рассчитать цену спроса, которую потребители считают целесообразной и готовы заплатить. Исходя из этого возможно выполнить расчеты финансовой целесообразности расходов на образование по видам специальностей и выполнить их оценку.

ANNA ASLANYAN
Doctor of Economics, Professor

Higher professional education market of RA and related price formation problems

Higher education is a necessary requirement for professional work force formation, which in turn, is a very high priority. Currently it is necessary to provide compatibility between education costs and payability of the population. In this context the question of pricing for education is reviewed here as a primary one. Currently at the market we have the supply price, the price at which market subjects offer their services. It is suggested to view the educational expenses as investments invested in human capital. In this case it is possble to calculate the demand price, price which the buyers consider acceptable and are ready to pay. Based on this it will be possible to make estimates for financial justification of education expenses and do the calculations based on profession types.

ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Մերի Բաղալյան
տ.գ.թ., դոցենտ

Ժամանակակից պայմաններում շուկայական մեխանիզմներն ու հարաբերությունները չեն կարող շրջանցել կրթական ոլորտը. այստեղ ևս շուկա է ձևավորում ինքնին հասկանալի է, որ կրթական ծառայությունների շուկան պետք է ձևավորվի համապատասխան առաջարկի և պահանջարկի շնորհիվ: Սակայն այստեղ պարտադիր է հաշվի առնել կրթական ոլորտի առանձնահատկությունները և սոցիալական կարևոր նշանակությունը, հատկապես՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը և դրա պաշտպանվածությունը:

Բարձրագույն կրթության ոլորտում տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունների, դրանց դրսևորումների ձևերի, ինչպես նաև տնտեսական տարբեր հիմնախնդիրների վերլուծությունը հիմնվում է, ամենից առաջ, հասարակական աշխատանքի ամբողջական կառուցվածքում բարձրագույն կրթության բացառիկ տեղի հստակ ըմբռնման վրա: Ըստ ՀՀ սահմանադրության 39-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»:

Յուրահատուկ և բազմաբնույթ է պետության դերն այս ոլորտում: Հարկավոր է ապահովել շուկայի սուբյեկտների իրավական պաշտպանվածությունը, պայմանների և երաշխիքների ստեղծումը, կրթական շուկայի կարգավորման տարբեր ձևերի և մեթոդների կիրառումը՝ կապված առանձին մասնագիտությունների ստացման հետ:

Շուկայական հարաբերությունների ակտիվորեն ներդրումը կրթության, մասնավորապես՝ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտ, պայմանավորված է մի շարք օբյեկտիվ պատճառներով:

Հետազոտելով կրթական գործունեության տնտեսական կողմը՝ բարձրագույն կրթությունը պետք է դիտարկել որպես հասարակական վերարտադրության կարևոր բաղկացուցիչ: Նշենք, որ բարձրագույն կրթությունը, որպես հասարակական վերարտադրության օբյեկտիվ պայման, անհրաժեշտ է դիտարկել տնտեսության այլ ոլորտների հետ սերտ միասնականության մեջ, իսկ դրա զարգացումը ընթանում է վերափոխումների ընդհանուր հունով՝ կապված շուկայական տնտեսության կայացման և զարգացման հետ:

Բարձրագույն կրթության ոլորտում շուկայական հարաբերությունների էությունը բացահայտելիս պետք է հաշվի առնել, որ տնտեսագիտական գրականության մեջ կան շուկան բնութագրող զանազան սահմանումներ, որոնք կարող են ամփոփել հետևյալ ձևակերպմամբ[13]. շուկան, ընդհանուր առմամբ, մի վայր է, որտեղ գնորդների և վաճառողների գործարքներն ազատ են, գները՝ կախված երկու կողմերի համաձայնությունից, հարաբերությունները «սերտ» են, գործարք կարող են կնքել ամեն մի ապրանքի ձեռքբերման առիթով՝ դրանով իսկ դառնալով ապրանքի և գնորդի ամբողջություն:

Կրթական ծառայությունների շուկայի հիմնական սուբյեկտներն են ուսանողը կամ սովորողը, բուհը, գործատուն կամ աշխատուժ օգտագործող կազմակերպությունը, տարբեր միջնորդ օղակները, մասնավորապես՝ զբաղվածության ծառայությունները, աշխատանքի բորսաները, կրթական կազմակերպությունների գործունեությունը հավատարմագրող և կարգավորող մարմինները, հասարակական տարբեր կառույցներ, որոնք նպաստում են կրթական ծառայությունների իրականացմանը, ինչպես նաև պետությունը: Այստեղ հիմնական սուբյեկտն է ուսանողը կամ սովորողը, որը ոչ միայն կրթական ծառայության վերջնական սպառողն է, այլ նաև տարբերվում է մյուս սպառողներից նրանով, որ օգտագործում է կրթության ստացման արդյունքը նյութական և այլ բարիքների ստեղծման, ապրուստի միջոցներ վաստակելու համար: Հենց այս սուբյեկտն է իրականացնում իր ապագա մասնագիտության, ուսուցման ժամկետների, տեղի, ձևի, ֆինանսավորման աղբյուրների, ինչպես նաև ապագա աշխատանքի վայրի ընտրությունը և հենց այս կենտրոնական սուբյեկտի շուրջն են ձևավորվում մնացած բոլոր սուբյեկտների հարաբերությունները:

Բարձրագույն կրթության ոլորտում որպես ապրանք հանդես է գալիս կրթական ծառայությունը, կրթական սպասարկումը, իսկ որպես գնորդ՝ պետությունը և բնակչությունը, որոշ դեպքերում՝ նաև միջնորդ կազմակերպությունը:

Կրթական ծառայությունների տեսությունը դեռևս վերջնականապես չի ձևավորվել, չկա «կրթական ծառայություն» հասկացության՝ համընդհանուր ճանաչում ունեցող սահմանում, դրա առանձնահատկությունների ամբողջական հետազոտություններ չեն կատարվել:

Մի շարք տնտեսագետների կարծիքով[14].

1. Կրթական ծառայությունը հատուկ տեսակի ապրանք է, որը սպառողի համար ոչ միայն ունի դրա որոշակի օգտակարությունն ար-

[13] Балашов Г.В., Виноградов Н.М. Трансформация экономического механизма высшей школы в современных условиях.-СПБ., Изд-во: С.-Петерб Ун-та экономики и финансов, 1996.

[14] Дятлов С.А. Экономика образования в условиях переходного периода. СПБ:. Изд-во: С.-Петерб Ун-та экономики и финансов, 1995.

տահայտող գին, այլև համընդհանուր օգտակարություն՝ մարդկային քաղաքակրթության՝ անմիջականորեն կուտակվող գիտական գիտելիքների տեսքով:

2. Կրթական ծառայությունների մատուցման ժամանակ սովորողը, այս կամ այն եղանակով, ձեռք է բերում որոշակի գիտելիքներ, սովորողի ընտրած մասնագիտական ուղղվածության ենթատեքստում մշակվում են ունակություններ և հմտություններ, կատարելագործվում են մարդու ֆիզիկական հնարավորությունները և այլն:
3. Կրթական ծառայություններն օժտված են անշոշափելիության հատկությամբ. դրանք հնարավոր չէ տեսնել, փորձել համը, լսել կամ հոտ քաշել: Գնորդը ստիպված է պարզապես հավատալ վաճառողի խոսքին: Կրթական հիմնարկները կամ ուսանողները, նպատակ ունենալով ուսուցման պայմանագիր կնքել, չեն կարող նախօրոք իմանալ դրա լրիվ արդյունքը: Իր հաճախորդների վստահության ամրապնդման համար բուհը, որպես կրթական ծառայության մատակարար, կարող է կիրառել մի շարք միջոցառումներ, որոնք կհանգեցնեն ծառայության շոշափելիության բարձրացմանը:
4. Կրթական ծառայությունն անբաժանելի է իր աղբյուրից, մինչդեռ ապրանքը նյութական ձևով գոյություն ունի՝ անկախ դրա աղբյուրի առկայությունից կամ բացակայությունից: Դա նշանակում է, որ կրթական ծառայությունը գոյություն չունի բուհից, նրա պրոֆեսորադասախոսական կազմից առանձին: Դասախոսի ամեն մի փոխարինում կարող է փոփոխություն մտցնել կրթական ծառայության մատուցման արդյունքում, հետևաբար և՝ պահանջարկում:
5. Կրթական ծառայությանը բնորոշ չէ որակի մշտականության հատկանիշը. ծառայության որակը տատանվում է լայն շրջանակներում՝ կախված դրանք մատակարարողներից, ինչպես նաև մատուցման ժամանակից և տեղից: Ծառայությունների սպառողները հստակ գիտեն որակի նման ցրվածության մասին և ծառայության մատակարարի ընտրության ժամանակ խորհրդակցում են այլ սպառողների հետ: Միևնույն կրթական ծառայությունները բուհի տարբեր ամբիոններում կարող են մատուցվել տարբեր ձևերով, հնարավոր է նույնիսկ միևնույն դասախոսը պարապմունքն անցկացնի տարբեր կերպ՝ կախված իր հոգեկան և ֆիզիկական վիճակից:
6. Կրթական ծառայությունը, որպես այդպիսին, հնարավոր չէ պահպանել, նշանակում է՝ դրա արտադրությունը, փոխանցումը (հաղորդումը) և սպառումը համընկնում են ժամանակի առումով: Ուստի, այդպիսի ծառայությունները չեն կարող կուտակվել ո՛չ սպա-

ողի, ո՛չ արտադրողի մոտ, չեն կարող փոխանցվել գնորդներին: Կրթական ծառայության այդպիսի հատկանիշը հատուկ պահանջներ է ներկայացնում ոլորտի կառավարմանը, քանի որ նեղացնում է շուկայական հարաբերությունների շրջանակը բարձրագույն կրթության բնագավառում: Կրթական ծառայության մի շարք հատկանիշների գոյությունը հիմք է տալիս դրանց վերլուծության ժամանակ օգտագործելու այնպիսի հիմնարար տնտեսական կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «գինը», «արժեքը», «ծախսերը» և այլն:

Կրթական ծառայությունները, դիտարկված ընդհանուր բնորոշումներից բացի, տարբերվում են մյուս ապրանքներից նաև այլ հատկանիշներով:

1. Կրթական ծառայությունը բնութագրվում է, որպես կանոն, բարձր արժեքով՝ կապված դրա մեջ մտավոր ծախսերի մեծ տեսակարար կշռով:
2. Կրթական ծառայությանը բնորոշ է երկարատևությունը: Այսինքն՝ կրթական ծառայություն մատուցելը միանվագ գործողություն չէ, այլ գիտելիքների և գործնական հմտությունների ձևով ուսումնական և գիտական տեղեկատվության փոխանցումն է անհատին, ինչը պահանջում է որոշակի ժամանակ:
3. Կրթական ծառայությունների բոլոր տեսակներին բնորոշ է սեզոնայնությունը. ուսանողներին, ասպիրանտներին, մինչբուհական նախապատրաստական ֆակուլտետների ունկնդիրներին ցույց տրվող բոլոր կրթական ծառայությունները ուսումնական գործընթացի և ուսումնական պլանով են սահմանափակված սեպտեմբերից մինչև մայիս ժամանակահատվածով:
4. Կրթական ծառայության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրա որակը կախված է ոչ միայն մատուցման աղբյուրից (դասախոսների աշխատանքի որակից և քանակից, աշխատանքի միջոցներից), այլև սպառողից, որին փոխանցվում են ուսումնական տեղեկատվությունը և հմտությունները: Կրթական ծառայության որակը կախված է սպառողի անձնական ընդունակություններից, դրանց դրսևորման աստիճանից, ուսումնառության (ուսուցման) գործընթացի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքից, ծախսած աշխատանքի քանակից և որակից: Կրթական ծառայությունների արժեքը բնութագրվում է բազմաթիվ հատկանիշներով, ինչպիսիք են կարևորությունը (նշանակությունը), օգտակարությունը, գործածականությունը, լիակատարությունը, արդիականությունը, մատչելիությունը, փոխանցման ձևը, արժանահավատությունը և այլն:
5. Կրթական ծառայության հատկանիշներից է որոշակիությունը:

Կրթական ծառայությունը որոշակի է, կարգավորված և ավարտուն՝ ի տարբերություն կրթության, որն անվերջ է: Կրթության նկատմամբ պահանջմունքների իրացման ձգտումը մարդու բնականոն վիճակն է: Այդպիսի կրթության հիմքում միայն ազատ մարդու ազատ ընտրությունն է, իր մտավոր, բարոյական և ֆիզիկական ուժերի ներդրումը, գիտելիքների ձեռքբերման գործընթացը: Տվյալ կրթական ծառայությունը ստանալու՝ սպառողի պահանջմունքը նշանակում է, որ կրթական ծառայության ընկալման համար նա ունի բավարար մտավոր ընդունակություններ, կրթական ծառայության վճարման համար՝ անհրաժեշտ գումար, սովորելու հնարավորություն, այսինքն՝ նրա ցանկությունն իրական է և ոչ թե երևակայական[15]:

6. Կրթական ծառայությունը բնորոշվում է արդյունավետության հետաձգմամբ և շրջանավարտի ապագա աշխատանքի ու կյանքի պայմանների արդյունքներից կախվածությամբ: Ավարտելով ուսումնառության գործընթացը՝ մասնագետը թողնում է կրթական ծառայությունների դաշտը և մտնում կրթական շուկայի հարաբերությունների ոլորտ՝ որպես որակյալ աշխատուժի սեփականատեր:

Եվ միայն աշխատանքի երկարատև ժամանակահատվածում մասնագետը, կրթական հաստատությունը և հասարակությունն ամբողջությամբ կարող են գնահատել բուհում ստացած կրթական ծառայության որակը: Կարծում ենք, կրթական ծառայությունների դիտարկվող հատկանիշը դրսևորվում է նրանում, որ դրանց օգտակար արդյունքը չի բացահայտվում տևական ժամանակ անց և, փաստորեն, կարելի է չափել միայն անուղղակի ցուցանիշների օգնությամբ:

Հիմնվելով վերը նշվածի վրա՝ բարձրագույն կրթության շուկան կարելի է բնորոշել որպես «կրթական ծառայություն» առանձնահատուկ ապրանքի իրական և հնարավոր արտադրողների և սպառողների փոխհարաբերությունների ամբողջություն: Դա բուհերի տնտեսական գործունեության բարդ մեխանիզմ է՝ հիմնված միկրոմակարդակում տնտեսավարելու տնտեսական ազատությունների զարգացման վրա՝ պետական կարգավորիչների պահպանմամբ: Բարձրագույն կրթության ոլորտում կրթական ծառայություններ ձևավորող առանձին բաղկացուցիչների (սուբյեկտների) փոխգործունեությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.

[15] Бизнес и высшее образование в условиях перехода к рыночной экономике: Тез. Докл./Алтай ГТУ, 1997.



Գծապատկեր 1

Բարձրագույն կրթության շուկայի կառուցվածքը

Ըստ գծապատկերի՝ բարձրագույն կրթության շուկան կարելի է բնութագրել որպես բազմասուբյեկտ: Բարձրագույն կրթության ոլորտում կրթական ծառայությունների շուկան հաստատությունների համակարգ է՝ կազմված ամենից առաջ արտադրողներից, սպառողներից և, որոշ դեպքերում, միջնորդներից:

Կրթական ծառայությունը հանդես է գալիս որպես բուհի արտադրական գործունեության յուրահատուկ ձև, որի արդյունքում ստեղծվում է ոչ թե նյութական, այլ որոշակիորեն ընդունված օգտակար բարիք՝ անմիջականորեն ուղղված մարդուն: Ինչպես և ամեն մի նյութական բարիք, կրթական ծառայությունն ունի սպառողական արժեք, այսինքն՝ նախատեսված է մասնագիտության ստացման կամ մարդկանց՝ մասնագիտական որակավորման բարձրացման պահանջմունքների բավարարման համար:

Ընդ որում, բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությունն ունի ընդգծված մասնագիտացում և առանձին ինքնուրույն օղակ է աշխատանքի հասարակական բաժանման համակարգում: Դրանով հանդերձ՝ շուկայական հարաբերությունների պայմաններում կրթական սպասարկումը կարող է փոխանակվել այլ ապրանքների և ծառայությունների հետ, իսկ կրթությունը՝ զարգանալ շուկայական արտադրության օրենքներով:

Ինչպես հայտնի է, ամեն տեսակի շուկայի բնորոշ է իրավիճակի փոփոխություն՝ կախված պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունից:

Կրթական ծառայությունների շուկայի առանձնահատկություններից է դանդաղ արձագանքումը աշխատանքի շուկայի իրավիճակին՝ պայմանավորված այն օբյեկտիվ պատճառով, որ մասնագետների պատրաստումը պահանջում է որոշակի ժամանակ (որպես կանոն, չորսից վեց տարի): Տվյալ ժամանակահատվածով էլ որոշվում է այն տարբերությունը, որից հետո աշխատանքի շուկան կարող է արձագանքել կրթական ծառայությունների շուկայի փոփոխություններին և՝ հակառակը: Նման անհամամասնությունների մեղմացումը հնարավոր է աշխատանքի շուկայի պահանջների կանխատեսման միջոցով:

Գործնականում, կրթական ծառայությունների շուկան համապատասխան չի արձագանքում տնտեսության իրական հատվածի պահանջներին, ինչն ունի նաև օբյեկտիվ պատճառներ: Մասնավորապես՝ բացակայում են տնտեսության ճյուղերում աշխատատեղերի կառուցվածքի փոփոխման վերաբերյալ հիմնավորված կանխատեսումները, աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի վերաբերյալ ուսումնասիրությունները: Բացի դրանից հաճախ բուհի առաջարկած ապրանքը, այսինքն՝ երիտասարդ մասնագետը, իր մասնագիտական և որակական չափանիշներով չի համապատասխանում գործատուների պահանջներին: Ուստի և կարևորվում է մասնագիտությունների ստանդարտների մշակումը: Մինչդեռ բուհի պատվիրատուն ներկայումս հիմնականում բնակչությունն է, որը չի կարող իրապես գնահատել աշխատանքի շուկայի վիճակը և զարգացման միտումները, առավել ևս՝ շուկայի ապագա պահանջներին նախապես արձագանքել և, միաժամանակ, շուկայի վրա ազդել՝ ապագա պահանջները կանխատեսելու և ձևավորելու համար:

Իրավիճակը կարող է էապես փոփոխվել, եթե փոխվի տնտեսվարող սուբյեկտների դերն ու նշանակությունը կրթական ծառայությունների շուկայում՝ որպես այդ յուրահատուկ ապրանքի վերջնական սպառողների:

Այս հիմնահարցի լուծման ուղիներից մեկը, կարծում ենք, կարող է լինել լայն որակավորում ունեցող մասնագետի պատրաստումը, որը, ելնելով աշխատանքի շուկայի փոփոխվող պահանջներից, անհրաժեշտության դեպքում կարող է արագ և նվազագույն ծախսերով ստանալ պահանջվող ավելի նեղ մասնագիտացում:

Կրթական ծառայությունների շուկան՝ յուրահատուկ շուկա է, որի գործունեությունը մշտական սերտ կապի մեջ է գտնվում և կողմնորոշված է դեպի աշխատանքի շուկայի պահանջները: Աշխատանքի շուկան տնտեսական համակարգի կարևորագույն օղակներից է, որի գործունեությունից է կախված հասարակական արտադրության արդյունավետությունը: Դա այն շուկան է, որտեղ ձևավորվում է աշխատուժի առաջարկը և պահանջարկը, որոշվում են աշխատուժի բաշխվածության համամասնությունները՝ կախված տնտեսական և հասարակական պահանջների կառուցվածքից:

ՀՀ աշխատանքի շուկայի առկա վիճակը ներկայացնենք աշխատանքի շուկան բնութագրող մի քանի ցուցանիշի վերլուծությունների միջոցով:

Աղյուսակ 1

ՀՀ-ում աշխատուժի պահանջարկը՝ ըստ տնտեսության ոլորտների 2007–2011 թթ.[16]

	Աշխատուժի պահանջարկը, մարդ					*որից՝ բանվորական մասնագիտություններ*				
	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*
Ընդամենը	8047	7402	7265	8550	8232	6770	5749	5736	6064	5709
Գյուղատնտեսություն	184	173	165	327	277	166	147	125	242	233
Արդյունաբերություն	2705	2504	1845	2778	2794	2485	2171	1598	2336	2455
Տրանսպորտ և կապ	1065	843	513	576	528	983	744	465	452	422
Շինարարություն	624	618	1770	749	687	574	528	1727	679	589
Ծառայություններ	3469	3264	2972	4120	3946	2562	2159	1821	2355	2010

Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում աշխատուժի պահանջարկը 2007–2011 թթ., ընդ որում՝ առանձնացված են բանվորական մասնագիտությունները: Ըստ այդ տվյալների՝ 2007 թ. բանվորական մասնագիտությունների նկատմամբ պահանջարկը կազմել է 85%, իսկ 2011 թ. 69%: Սա վկայում է, որ աշխատանքի շուկայում բարձրագույն կրթությամբ մասնագետների պահանջարկը ցածր է: Կարելի է եզրակացնել, որ աշխատանքի շուկայի և կրթական ծառայությունների շուկայի միջև առաջանում է անհամապատասխանություն: Պաշտոնական վիճակագրությունը, ինչպես և ստեղծված իրավիճակը ցույց են տալիս, որ աշխատանքի շուկայի պահանջարկը մեծավ մասամբ սահմանափակվում է բանվորական մասնագիտություններին ներկայացվող պահանջով (գծ. 1): Սա վկայում է այն մասին, որ կրթական ծառայությունների շուկան այնքան էլ ճկուն չէ, և ներկայումս բարձրագույն մասնագիտական կրթություն պահանջող մասնագիտությունների գծով առաջարկը հեռու է աշխատանքի և կրթական ծառայությունների շուկաների միջև համագործակցված գործունեության իրականացումից:

[16] Այս և հետագա մյուս գծապատկերների կազմման համար հիմք են ծառայել ՀՀ ԱՎԾ-ի կողմից տրամադրված տվյալները:



Գծապատկեր 2

ՀՀ-ում աշխատուժի պահանջարկը՝
ըստ տնտեսության ոլորտների 2007–2011 թթ.

Որպես պետական տնտեսության սուբյեկտ՝ բուհը կազմակերպություն է, որն օգտագործում է պետական ռեսուրսները՝ պետական բյուջեից հատկացումների ձևով՝ պետական պատվերը կատարելու նպատակով, իսկ որպես շուկայական տնտեսության սուբյեկտ՝ հանդես է գալիս անմիջական կրթական ծառայություններ արտադրողի դերում՝ կողմնորոշված դեպի կրթությունը, ինչն էլ նշանակում է, որ դրանց առաջարկը ձևավորվում է շուկայական դաշտում: Կրթական ծառայությունների սպառողները, առաջին հերթին, բնակչության որոշակի խմբեր են, որոնց համար էլ դրանք նախատեսված են:

Ուսանողը, ունկնդիրը ոչ միայն պարզապես կրթական ծառայությունների նյութական կրող են, աշխատանքի գործընթացում դրանք օգտագործող, այլև դրանց միակ վերջնական սպառողը, ինչը հանգեցնում է նրան, որ կրթական ծառայությունների նկատմամբ պահանջարկը ավելանում է, իսկ աշխատանքի շուկայում բարձրագույն կրթությամբ մասնագետների նկատմամբ պահանջարկը՝ ոչ:



Գծապատկեր 3

ՀՀ-ում աշխատանքով ապահովվածները՝ ըստ տնտեսության ոլորտների 2007–2011 թթ.

Կրթական ծառայության սպառման ժամանակ առկա են նաև արդյունքներ՝ առանձին անհատի համար՝ «մարդկային կապիտալի» ձևով և, դրա արդյունքում, նրա եկամուտների աճով, իսկ որոշակի ձեռնարկության համար՝ շահույթի աճով, ինչպես նաև բնակչության կուլտուր-որակական մակարդակի բարձրացմամբ: Հենց այդ պատճառով էլ բարձրագույն կրթական ծառայությունների շուկայի զարգացման հարցում շահագրգռված են ինչպես պետությունը և առանձին ձեռնարկություններ, այնպես էլ առանձին քաղաքացիները:

Բնակչությանը դիտարկելով որպես բարձրագույն կրթության շուկայի սուբյեկտ՝ քննարկենք բնակչության՝ որպես կրթական ծառայությունների սպառողի, ուսուցման և կրթական ծառայությունների մատուցման հարցը: Հետազոտման արդյունքում առանձնացվել է բնակչության հինգ խումբ:

Առաջին խմբին են դասվում ցածր եկամուտներ և ցածր սոցիալական կարգավիճակ ունեցող աշխատողները, որոնց համար հիմնական աշխատա-

վարձը գոյատևման միակ աղբյուրն է: Այդ խմբին բնորոշ է սոցիալտնտեսական պասիվ վարքը աշխատանքի շուկայում:

Բնակչության II խումբը տարբերվում է բարեկեցության ավելի բարձր մակարդակով: Այդ խմբի աշխատողները բարձրացնում են իրենց կենսամակարդակը՝ օգտագործելով արտաժամյա աշխատանքի հնարավորությունները, ինչն ավելի ինտենսիվ է և հյուծիչ, նույնիսկ՝ վնասակար առողջության համար (այս խմբում ընդգրկված են որակյալ բանվորները, գիտաշխատողները, բժիշկները, դպրոցական ուսուցիչները, բուհերի դասախոսները և այլն):

Բնակչության III խմբին բնորոշ է բարեկեցության բարձր մակարդակը, որը ոչ մեծ աշխատավարձի դեպքում ապահովվում է պետական սեփականության օգտագործմամբ՝ անձնական հարստացման նպատակով:

IV խմբին է դասվում բնակչության այն մասը, որի կենսամակարդակը ձևավորվում է տնտեսության այն ոլորտների եկամուտներից, որտեղ առկա են դրանց աճի համար առավել բարենպաստ պայմաններ (բորսա, բանկ):

Բնակչության V խմբի եկամուտները ձևավորվում են ստվերային, ոչ օրինական գործունեությունից:

Նշված խմբերում ձևավորվում է որոշակի միասնություն սոցիալտնտեսական մակարդակում, մասնավորապես՝ բարձրագույն կրթություն ստանալու հավակնության հարցում:

Բնակչության I և II խմբերի համար կրթության մատչելիության աստիճանը բնորոշող կարևորագույն գործոնը տնտեսականն է, այսինքն՝ ընտանիքների եկամուտների ցածր մակարդակը, պրոֆեսիոնալ աշխատանքի մեծ նշանակությունը: Կարծում ենք, որ վճարովի բարձրագույն կրթության մատչելության աստիճանը բնակչության նման խմբերի համար բավականաչափ ցածր է: Նրանք ենթադրում են, որ բնակչության մի մասին՝ 3-րդ 4-րդ և 5-րդ սոցիալական խմբերից, չի մտահոգում ուսուցումը վճարովի դարձնելու հանգամանքը: Այդ խմբերի բնակչության մի մասի համար տնտեսական ճգնաժամի պայմաններում, որը կտրուկ իջեցնում է կենսամակարդակը, գլխավորը ակնհայտորեն պետք է լինի կենսամակարդակը պահպանելու, հարստանալու, նախնական և երկրորդային կուտակման ձգտումը: Այս դեպքում բարձրագույն դպրոցում վճարովի ուսուցումը կարող է դառնալ միջոցների ներդրման պակաս գերադասելի հատվածը:

Երբ կրթությունը վճարվում է հարկերի ճանապարհով և բաշխվում անվճար կամ շատ էժան, այդ ժամանակ քիչ ապահովված մարդիկ ևս ի վիճակի են լինում լավ կրթություն ստանալու: Դա ուսուցման հավասար հնարավորությունների նախադրյալ է ստեղծում, թույլ է տալիս ավելի հավասարաչափ բաշխելու կրթական ծառայությունը քաղաքացիների միջև, ինչն ի վիճակի չէ կատարելու շուկան:



Գծապատկեր 4

ՀՀ-ում զբաղվածներն ըստ տարիքային խմբերի և կրթության 2010–2011 թթ.



Գծապատկեր 5

ՀՀ-ում միջին ամսական եկամուտն ըստ կրթական մակարդակի 2010–2011 թթ.

Ուսումնասիրելով ՀՀ աշխատանքի շուկայում զբաղվածության մակարդակը՝ ըստ տարիքային խմբերի և բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների, հնարավորություն ենք ստանում փաստելու, որ բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների մեջ առավելագույնս զբաղված են 25–54 տարիքային խմբում ընդգրկվածները, բարձրագույն կրթությամբ տղամարդիկ զբաղվածների մեջ ավելի մեծ քանակ են կազմում, քան կանայք, գրեթե կիսով չափ ավելի պակաս է գյուղական բնակավայրերում բարձրագույն կրթությամբ զբաղվածների քանակը, քան քաղաքային բնակավայրերում: Բնականաբար, խնդիր է առաջանում տարածքների հավասարաչափ զարգացման ուղղությամբ միջոցառումների մշակման և ներդրման առումով: Եթե տարիքային խմբերում զբաղվածության մեծ և փոքր լինելու հանգամանքը ունի օբյեկտիվ մեկնաբանություն, տղամարդկանց և կանանց ոչ հավասարաչափ ընդգրկվածությունը ևս ունի բացատրություն, ապա գյուղական և քաղաքային բնակավայրերում զբաղվածության բևեռացվածությունը լուծում պահանջող հիմնախնդիր ենք համարում:

Ներկայացնելով ՀՀ-ում բնակչության ամսական միջին եկամուտները և հաշվի առնելով դրանց ձևավորման ընթացքում կրթության, հատկապես՝ բարձրագույն կրթության դերը, կարող ենք վստահեցնել, որ եկամուտների ոչ բարձր մակարդակով, հանդերձ՝ բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների ամսական միջին եկամուտներն ավելի բարձր են, քան մյուսներինը: Դա է պատճառը, որ շրջանավարտների, նրանց ծնողների մեծագույն ցանկությունն է դառնում բարձրագույն կրթության ստացումը՝ անկախ աշխատանքի շուկայում ստեղծված իրավիճակի, երբ կա անհամապատասխանություն թափուր աշխատատեղերի և պատրաստվող մասնագետների քանակի միջև, հատկապես՝ առավել բարձր պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով (իրավաբան, տնտեսագետ, SS մասնագետ):

Ուսումնասիրելով ներկայացվող վիճակագրությունը, տեսնում ենք, որ բարձրագույն կրթություն ունեցող զբաղված բնակչության տեսակարար կշիռը բարձր է հատկապես 30–100 հազար դրամ ամսական եկամուտների դեպքում: Սակայն նույնը կարելի է ասել նաև թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների համար, այն տարբերությամբ, որ բարձրագույն կրթություն ունեցող զբաղված բնակչության տեսակարար կշիռը բարձր է 60–100 հազար դրամ եկամուտ ունեցողների մեջ, իսկ թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների քանակը ավելի մեծ տեսակարար կշիռ է կազմում 30–60 հազար դրամ եկամուտ ունեցող զբաղված բնակչության մեջ:





Գծապատկեր 6

ՀՀ–ում զբաղված բնակչության թվաքանակը ըստ եկամտի չափի և կրթական մակարդակի



Գծապատկեր 7

ՀՀ-ում գործազրկության մակարդակը ըստ՝ կրթական աստիճանի և տարիքային խմբերի 2010–2011 թթ.

ՀՀ-ում առկա գործազրկության մակարդակը ևս լուծում պահանջող հիմնախնդիրներից է, որտեղ ոչ պակաս կարևորություն ունի նաև բնակչության կրթական մակարդակը: Ուսումնասիրելով գործազուրկների քանակում բարձրագույն կրթություն ունեցող բնակչության տեսակարար կշիռը, պարզ է դառնում, որ աշխատանքի շուկայի և կրթական ծառայությունների շուկայի միջև անհամաձայնությունն առաջացնում է բարձրագույն կրթությամբ մասնագետների բավական լուրջ (մոտ 18% 2010 թվականին և մոտ 16% 2011 թվականին) գործազրկություն, այն դեպքում, երբ փոխհամաձայնեցված գործունեությունը աշխատանքի շուկայի և կրթական ծառայությունների շուկաների միջև կարող էր համեմատաբար նվազեցնել բարձրագույն կրթությամբ գործազուրկների քանակը:



Գծապատկեր 8

ՀՀ-ում գործազրկության մակարդակը՝ ըստ կրթական աստիճանի 2010–2011 թթ.



Գծապատկեր 9

ՀՀ-ում գործազուրկների թվաքանակը՝ ըստ կրթության մակարդակի 2007–2011 թթ.

Այստեղ պետք է հաշվի առնենք նաև այն կարևոր հանգամանքը, որ կրթական ծառայությունների շուկայում բուհը գործում է որպես շուկայի սուբյեկտ՝ ելնելով ձևավորվող առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից: Այդ առումով տեղին է նշել բարձրագույն կրթության ոլորտում որոշակի «հակասության» մասին: Այսինքն՝ առաջանում է իրավիճակ, երբ պատրաստվող մասնագետների քանակը գերազանցում է աշխատանքի շուկայում ձևավորված պահանջարկը, ինչը զգալիորեն մեծացնում է գործազրկության ռիսկը: Տվյալ դեպքում մասնագիտական կրթությունը (որոշակի իմաստով՝ իրական պահանջարկը գերազանցող մասով), կարելի է ասել, վերածվում է ընդհանուր կրթության: Այսպես, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բարձրագույն կրթություն ունեցողների 33%-ը 17 կատարում է

[17] Савицкая Е.В., Ценность и доступность высшего профессионального образования в России // Вопросы статистики, 9, 2004, с. 47.

աշխատանք, որը չի համապատասխանում ստացված մասնագիտությանը, ինչը նշանակում է, որ ծախսված միջոցներն օգտագործվել են ոչ արդյունավետ: Սակայն, այստեղ գոյություն ունի հարցի նաև մյուս, և կարծում ենք, ոչ պակաս կարևոր կողմը՝ բարձրագույն կրթությունը ենթադրում է ոչ միայն նեղ մասնագետի պատրաստում, այլ ներառում է սուբյեկտի սոցիալական, մտավոր, մշակութային զարգացում, ինչը կարևոր է ամբողջ հասարակության համար: Կարծում ենք, այս առումով կարևոր է ուսումնասիրել բարձրագույն կրթության ստացման նկատմամբ բնակչության պահանջարկը, ինչը շուկայական տնտեսության պայմաններում զգալի չափով պայմանավորում է բուհերի գործունեության հիմնական ուղղություններն ու հեռանկարները: Ընդհանրապես, բարձրագույն կրթության զարգացման շարժիչ ուժը ներկայումս հիմնականում կրթական ծառայությունների շուկան է, այլ ոչ թե աշխատանքի շուկան:



Գծապատկեր 10

ՀՀ-ում գործազուրկների թվաքանակը՝ ըստ տարիքային խմբերի 2007–2011 թթ.

Աշխատանքի շուկայի հիմնական սուբյեկտները՝ գործատուները, վարձու աշխատողները, զբաղվածության պետական և ոչ պետական ծառայությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները միաժամանակ նաև կրթական ծառայությունների շուկայի սուբյեկտներ են: Դրանց բոլորի խնդիրները, նպատակներն ու գործառույթները տարբեր են և պահանջում են առանձին ուսումնասիրություններ:

Նշված երկու շուկաներից ամեն մեկին բնորոշ են գործունեության և մասնակիցների հարաբերությունների մի շարք առանձնահատկություններ, միաժամանակ՝ դրանց գործունեությունը փոխկապակցված է և փոխպայմանավորված: Հետևաբար՝ օբյեկտիվ անհրաժեշտություն են դառնում այդ շուկաների և, հատկապես, դրանց փոխգործակցության կարգավորման մեխանիզմների ձևավորումն ու կիրառումը: Դա ենթադրում է պետության ակտիվ մասնակցությունն այդ գործընթացին:

Այդ շուկաների փոխհարաբերությունների առանձնահատկություններից է այն, որ սպառողների պահանջները կրթական համակարգի և կրթական ծառայությունների նկատմամբ կարող են, և գործնականում հաճախ են լինում տարբեր: Դա արտահայտվում է նրանում, որ սովորողները և գործատուները ներկայացնում են տարբեր պահանջարկ առանձին մասնագիտությունների նկատմամբ, այսինքն՝ ձևավորվում է որոշակի հակասություն կրթական ծառայությունների և աշխատանքի շուկաների միջև: Այս պայմաններում առավել կարևորվում են այդ շուկաների սուբյեկտների փոխհարաբերությունների ուսումնասիրումը և զարգացման միտումների կանխատեսումը, ինչը նպատակահարմար է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

1. տնտեսության ճյուղերում և ոլորտներում առկա աշխատանքային ռեսուրսների և պատրաստվող մասնագետների կառուցվածքի ճիշտ գնահատումը,
2. աշխատանքի և կրթական ծառայությունների շուկաներում ձևավորվող ապագա պահանջների գնահատումը,
3. երկու շուկաների ապագա պահանջների բավարարման հայեցակարգի մշակումը:

Այսպիսի կանխատեսումային բնույթի հետազոտությունները հնարավորություն կընձեռեն երկու շուկաների բոլոր սուբյեկտներին առավել ճիշտ և արդյունավետ իրականացնելու իրենց գործունեությունը, իսկ պետությանը՝ առավել նպատակային դարձնելու բարձրագույն կրթության ֆինանսավորումը, մշակելու և իրականացնելու կադրային քաղաքականությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԱՎԾ-ի տրամադրած տվյալներ
2. ՀՀ Օրենքը «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին»
3. ՀՀ ԱՎԾ-ի տրամադրած տվյալներ
4. Балашов Г.В., Виноградов Н.М. Трансформация экономического механизма высшей школы в современных условиях.-СПБ., Изд-во: С.-Петерб Ун-та экономики и финансов, 1996г.
5. Бизнес и высшее образование в условиях перехода к рыночной экономике: Тез. Докл./Алтай ГТУ, 1997
6. Дятлов С.А. Экономика образования в условиях переходного периода. СПБ:. Изд-во: С.-Петерб Ун-та эконоика и финансов, 1995.
7. Савицкая Е.В., Ценность и доступность высшего профессионального образования в России //Вопросы статистики, 9, 2004, с. 47.

ՄԵՐԻ ԲԱԴԱԼՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների առանձնահատկությունները ՀՀ-ում

Շուկայական հարաբերությունների ձևավորման և կայացման գործընթացում կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի միջև առաջանում են որոշակի հակասություններ՝ պայմանավորված կրթական ծառայությունների առաջարկի և պահանջարկի քանակական և կառուցվածքային անհամապատասխանությամբ: Հաշվետվության մեջ ներկայացվել են կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների առանձնահատկությունները ՀՀ-ում: Բացահայտվել են դրանցում առկա հակասությունները, փորձ է կատարվել վերլուծությունների հիման վրա շարադրելու հնարավոր զարգացման ուղղությունները:

МЕРИ БАДАЛЯН
кандидат экономических наук, доцент

Особенности взаимодействия рынка труда и рынка образовательных услуг в РА

В процессе формирования и становления рыночных отношений возникают некоторые противоречия между рынком образовательных услуг и рынком труда, которые обусловлены количественными и структурными несоответствиями спроса и предложения образовательных услуг. В отчете представлены особенности взаимодействия рынка образовательных услуг и рынка труда в РА. Выявлены существующие противоречия, на основе анализа сделана попытка предложить возможные направления развития.

MERI BADALYAN
PhD in Economics, Associate professor

Peculiarities of cooperation of labor market and educational services market in RA

In the process of the formation and establishment of market relations are generated some contradictions between the educational services market and the labor market, which are caused by quantitative and structural irregularities of demand and supply of educational services. The report presents the features of the interaction of the education market and the labor market in the Republic of Armenia. Some contradictions are revealed; based on the analysis possible directions of developmentare provided.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ

Արևիկ Հովհաննիսյան
տ.գ.թ., դոցենտ

Հրատապությունը - «Մարդկային կապիտալը» (այսուհետ՝ ՄԿ) և «ներդրումները մարդկային կապիտալում» (այսուհետ՝ ՆՄԿ) արդարացիորեն դասվում են ժամանակակից տնտեսագիտության հրատապ հիմնախնդիրների շարքին, որոնց առանձնահատկությունները պայմանավորված են միմյանց շաղկապված մի շարք գործոններով: Նախ, հստակեցման կարիք ունի, թե որն է ՄԿ տնտեսագիտական մեկնաբանությունը և, երկրորդ, որոնք են համարվում ՆՄԿ, ինչ առանձնահատկություններ ունեն: Հիմնախնդիրն էլ ավելի է բարդանում, քանի որ վերոհիշյալ տնտեսագիտական կատեգորիաները տարաբնույթ և հաճախ իրարամերժ դրսևորումներ ունեն տարբեր երկրներում՝ կախված երկրի տնտեսական զարգացման մակարդակից, ձևավորված պատմամշակութային ավանդույթներից, մարդկանց մտածելակերպից, հասարակության որակից, բարոյա-հոգեբանական արժեհամակարգից և այլն: Այս տեսանկյունից, առավել հրատապ է ՄԿ տնտեսագիտական հետազոտությունը Հայաստանի պարագայում՝ որպես անցումային դասական երկիր, որտեղ սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շուկայական հաստատություններն ու գործիքակազմը գտնվում են կայացման փուլում: Անտարակույս, Հայաստանի պարագայում հիշյալ հիմնախնդիրները ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության ձևավորման, մարդու իրավունքների, անհատի սոցիալական պաշտպանվածության, մտավոր սեփականության պաշտպանության հիմնախնդիրների լուծման խաչմերուկ են: Նկատի ունենանք, որ ՆՄԿ-ի համար բարենպաստ պայմանները, ինչպես նաև ՄԿ-ի պետական պաշտպանությունը առանցքային գործոն է Հայաստանի ժամանակակից ամենահրատապ խնդիրներից մեկի լուծման՝ բնակչության արտագաղթը կանխելու համար: Հրատապ է պետության դերի և առաքելության հստակեցումը ՄԿ և ՆՄԿ բնագավառում սոցիալական արդարության սկզբունքների, հետևաբար նաև՝ հասարակության սոցիալական համերաշխության ապահովման առումով: Կարող ենք պնդել, որ ՄԿ պաշտպանությունը Հայաստանի պետական, տնտեսական, սոցիալական անվտանգության ապահովման լուրջ գրավականն է: Այս ամենով էլ պայմանավորված է ՄԿ և ՆՄԿ հրատապությունը ՀՀ-ում:

ՄԿ և ՆՄԿ գիտական լիարժեք հետազոտությունը, մեր կարծիքով, ենթադրում է փոխպայմանավորված մի շարք տնտեսագիտական կատեգորիաների համակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպիսիք են՝

- ՄԿ,
- ՄԿ պաշտպանություն, սոցիալական արդարության սկզբունքների գործնական կիրառություն,
- ՆՄԿ հիմնական ուղղություններ, անհրաժեշտություն, շարունակականության ապահովում,
- ՆՄԿ արդյունավետության գնահատում:

Մինչ վերը թվարկված կատեգորիաների հետազոտությանն անցնելը, անհրաժեշտ է շեշտել հետազոտության համար էական այն հանգամանքը, որ ՄԿ ուսումնասիրություններն ունեն սուբյեկտիվ բնույթ, և հիմնախնդրին առնչվող հարցերը տնտեսական զարգացման տարբեր մակարդակի երկրներում ունեն տարբեր սահմանումներ և մեկնաբանություններ: Մյուս կողմից՝ հիմնահարցը պետական և անձնական հոգածության օբյեկտ է միաժամանակ՝ հաճախ պարունակելով սուբյեկտիվ բազմաթիվ մոտեցումներ ու լուծումներ: Վերջնահաշվում ՆՄԿ դաշտը պետության կողմից հրապուրիչ դարձնելու հետ մեկտեղ այն մեծապես կախված է տվյալ անհատի զարգացման մակարդակից, ցանկություններից և ձգտումներից: Պատահական չէ, որ գիտակցելով հանդերձ, որ ՆՄԿ բարձրացնում են ՄԿ շուկայական արժեքը, ոչ բոլոր մարդիկ են հակված կրթվելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու, առավել ևս ինքնակրթությամբ զբաղվելու:

Ժամանակակից պայմաններում հստակեցման և գիտական հիմնավոր մեկնաբանության կարիք ունի ՄԿ սահմանումը և դասակարգումը, դրա տեսակների հստակ տարանջատումը:

ՄԿ տնտեսագիտական ամենաբարդ կատեգորիաներից մեկն է, որը, իսկապես, դժվար է հստակ սահմանել: Հիմնական դժվարությունն այն է, որ ՄԿ-ն խիստ անհատական է: Միջազգային փորձը ցույց է տալիս, թե ինչպես փոքր ընկերությունները վերաճում են աշխարհահռչակ հանրահայտ ընկերությունների՝ անձանց շնորհիվ և, հակառակը, ինչպես հանրահռչակ ընկերությունը փլուզվում են տնօրենի փոխարինումից հետո: ՄԿ կարևորությունը ներկայիս պայմաններում, այդուհանդերձ, կապվում է մարդկային գործոնի հետ: Ըստ ԱՄՆ Քարնեգիի ինստիտուտի կատարած հետազոտությունների արդյունքների՝ հայտնի կազմակերպությունների աշխատանքի արդյունքը 87%-ով կախված է աշխատակցից, մարդուց կամ մարդկային գործոնից և միայն 13%-ն է կանխորոշվում տեխնիկայի և տեխնոլոգիայի առաջադիմությամբ:

Իր բարդությամբ հանդերձ՝ «ՄԿ» հասկացություն ասելով հասկանում ենք աշխատուժի կրթական մակարդակը, գիտելիքների, հմտությունների, փորձի, արհեստավարժության, ձեռնարկատիրական կարողությունների մակարդակը, առանձնաշխարհը: Նույն տրամաբանությամբ, «ՆՄԿ» նշանակում է կրթություն, ուսումնառություն, տարատեսակ վերապատրաստումներ

ու որակավորման բարձրացում, աշխատանքային փորձի կուտակում, գիտելիքների ձեռքբերման ամեն մի եղանակ: Ուստի կարելի է պնդել, որ տարիների ընթացքում կրթական մակարդակի բարձրացման, գիտելիքների, հմտությունների բարձրացմանը զուգընթաց անընդհատ աճում է մարդկային կապիտալի իրական շուկայական արժեքը:

Դասական մոտեցմամբ՝ ՄԿ-ը կարելի է դասակարգել բազմաթիվ տեսակների, սակայն, ընդհանրական առումով, հնարավոր է տարանջատել ՄԿ հետևյալ տեսակները՝

- կանանց և տղամարդկանց,
- կայացած և կայացման փուլում գտնվող,
- ունիվերսալ (համակարգիչ, անգլերեն) և մասնագիտական,
- դրական և բացասական,
- էկոլոգիապես մաքուր և էկոլոգիապես վնասակար,
- պահանջված և չպահանջված,
- քաղաքականացված և չքաղաքականացված,
- անհատական, կոլեկտիվ, ազգային:

ՄԿ-ի դրական և բացասական, ինչպես նաև էկոլոգիապես մաքուր և էկոլոգիապես ոչ մաքուր տեսակների տարանջատման հիմքում է մարդկային գործունեության վերջնական արդյունքը: Կա մարդկային գործունեություն, որն ուղղված է հենց մարդկությանը, նրա առաջադիմությանը, շրջակա միջավայրին, հասարակությանը: Նույն տրամաբանությամբ հնացած մասնագիտությունները և աշխատանքային հմտություններ ունեցող կապիտալը կարող է դասակարգվել որպես չպահանջված: Այն երկրներում, որտեղ աշխատանքի շուկան անհավասարակշիռ է, և լիարժեքորեն չեն գործում շուկայական մեխանիզմները, ՄԿ-ը գործարարության պես, կարող է քաղաքականացվել: ՄԿ-ի քաղաքականացվածությունն առկա է այն պայմաններում, երբ աշխատանքի շուկայում ավելի մրցունակ է դառնում, այսպես կոչված՝ «տանիք ունեցող» ՄԿ-ը:

Խոսելով ՄԿ-ի մասին, անհրաժեշտ է անդրադարձ կատարել այն առանցքային բաղադրիչներին, որոնք ձևավորում են ամբողջական ՄԿ-ը:

Ներկայումս ՄԿ բաղադրիչներ են՝

- Մասնագիտական գիտելիքները,
- Մասնագիտական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունը,
- Ընդհանուր գիտելիքները (օտար լեզուների, համակարգչային ծրագրերի իմացությունը),
- Ստեղծարարությունը, աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու կարողությունը,
- Միջազգային փորձի իմացությունը,

- Աշխատանքային փորձը, հմտությունները,
- Առողջությունը,
- Սոցիալական կապերը,
- Բանակցելու, հրապարակային ելույթ ունենալու կարողությունները, հռետորական արվեստը, մարդկանց վրա ներգործելու կարողությունը,
- Առաջնորդումը, բախումներ լուծելու կարողությունը, ինքնաքննադատությունը, իրեն կողքից նայելու կարողությունը (հայացք պատշգամբից), բուժիչ հատկությունները, ձգողական ուժը,
- Առանձնաշխարհը:

Այդուհանդերձ, ՄԿ-ը առանձնահատկություններ է դրսևորում անցումային և կայացած շուկայական տնտեսության պարագայում, օրինակ՝ ծանոթությունները, ընտանիքի, ծնողների դիրքը անհամեմատ ավելի բարձրացնում են ՄԿ արժեքն անցումային տնտեսության պարագայում (ՄԿ-ի քաղաքականացում):

Գիտական տեսանկյունից պակաս հետաքրքրություն չի ներկայացնում ՄԿ արժեքի հետազոտությունը: Ի տարբերություն կապիտալի մյուս տեսակների՝ ՄԿ-ի օգտագործումը ենթադրում է նրա արժեքի շարունակական աճ, այլ ոչ թե մաշվածություն, քանի որ տարիների ընթացքում գիտելիքներն ու աշխատանքային հմտություններն աճում են:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է տարբերակել ՄԿ արժեքի մի քանի տեսակներ՝ արժեքը, շուկայական արժեքը, ներկա արժեքը:

«ՄԿ արժեքը» բոլոր այն ծախսերի հանրագումարն է, որոնք կատարվում են ամբողջական կապիտալի ձևավորման նպատակով: Իհարկե, տարբեր ՄԿ արժեքները խիստ տարբեր են՝ պայմանավորված ինչպես կրթության, այնպես էլ այլ տարաբնույթ ծախսերի մեծությամբ: Սակայն հարկ է նշել, որ ՄԿ արժեքը կարող է էապես տարբերվել նրա շուկայական արժեքից: Ընդ որում, ամենևին պարտադիր չէ, որ ՄԿ բարձր արժեքը ինքնին ունենա բարձր շուկայական արժեք, քանի որ ՄԿ շուկայական արժեքը ձևավորվում է շուկայական կանոններին համապատասխան: ՄԿ շուկայական արժեքը հաճախ նույնացնում են աշխատավարձի, հոնորարի մեծության հետ:

«ՄԿ-ի ներկա արժեքը», այսպես կոչված՝ ապագայի «զեղչված գինն» է, կամ այն գումարը, որը կբերի ՄԿ-ն ապագայում:

ՄԿ արժեքը դրամական արտահայտությամբ անընդհատ կարող է աճել, սակայն կապիտալի շուկայական արժեքը լինի շատ ցածր:

Առանձին հետազոտության կարիք ունի գործոնների համախումբը, որոնք այս կամ այն երկրում նպաստում են (խոչընդոտում են) ՄԿ արժեքի բարձրացմանը (արժեզրկմանը):

Ենթադրվում է, որ տարիների ընթացքում, այլ հավասար պայմանների դեպքում, գնալով աճում է ՄԿ արժեքը: Ինչպես ընդունված է ասել՝ առողջությունն ու գիտելիքները ամեն մարդու՝ աշխատանքի շուկայում մրցունակության գրավականն են: Հայաստանի պարագայում ՄԿ արժեքը բարձրացնում են նաև այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են ընտանիքի սոցիալական կարգավիճակն ու սոցիալական կապերը: Անժխտելի է այն փաստը, որ աշխատանքի շուկայում հաճախ ավելի պահանջված են լինում հզոր սոցիալական կարգավիճակ ունեցող ընտանիքների զավակները: Սա վկայում է ՄԿ քաղաքականացման մասին:

Մարդկային կապիտալի շարունակական զարգացման կարևորագույն բաղադրիչ է վերապատրաստումների և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպումը: Ժամանակակից դինամիկ փոփոխությունների պարագայում ՄԿ արժեքը նկատելի բարձրանում է վերապատրաստման շնորհիվ: Կայացած շուկայական տնտեսության պարագայում որակավորման բարձրացման և վերապատրաստման կենտրոնները դարձել են կայուն բիզնես և անգամ վարկանշվում են: Հայաստանի պարագայում, որոշ բացառություններով, կարելի է պնդել, որ այդ շուկան դեռևս լիարժեքորեն չի գործում: Այս շուկայի ձևավորումը Հայաստանի պարագայում խիստ անհրաժեշտ է, քանի որ շուկայական ենթակառուցվածքների և շուկայական հաստատությունների ձևավորմանը զուգահեռ տեղի է ունենում կառուցվածքային գործազրկություն. վերանում են կամ հրատապությունը կորցնում են շատ մասնագիտություններ, դրան հակառակ առաջանում է նոր մասնագիտությունների կարիք: Հետևաբար, Հայաստանին անհրաժեշտ են փոխազդեցական ուսուցողական դասընթացներ: Պատահական չէ, որ աշխարհահռչակ ընկերությունների կատարած ծախսերի մեջ գովազդից հետո 2-րդ տեղն են զբաղեցնում անձանակազմի վերապատրաստումների վրա կատարված ծախսերը: Անձնակազմի շարունակական վերապատրաստումները կոլեկտիվ և ազգային ՄԿ-ի առանցքային գործոնն են:

Քանի որ ՀՀ-ում փոքր ու միջին գործարարությունը զարգացած չեն, ի լրումն՝ Հայաստանում գործարարությունը ընդգծված քաղաքականացված է, ուստի բարձրորակ ՄԿ-ի արդյունավետ դրսևորման համար կարևոր նշանակություն ունի կազմակերպության մենեջմենթը: Հենց կառավարման լավագույն տարբերակներից է կախված մարդկային կապիտալի բոլոր հնարավորությունների բացահայտումը: Նշենք, որ կառավարման մակարդակի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում վերջին տեղն է զբաղեցնում, ինչը լուրջ խոչընդոտ է մարդկային կապիտալի լիարժեք բացահայտման համար[18]:

[18] Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2011–2012, էջ 7

Մշտապես բարձր գործազրկության, ինչպես նաև գործարար ցածր ակտիվության ու ներդրումային անհրապույր դաշտի պայմաններում ՄԿ-ի քաղաքականացվածության սինդրոմն ուժեղանում է («տանիք» ունեցող ՄԿ-ը հեշտությամբ տեղավորվում է աշխատանքի՝ զբաղեցնելով պետական բարձր վճարվող սահմանափակ քանակությամբ աշխատատեղերը), որի հետևանքով իրական բարձրաժեք ՄԿ-ը իր տեղը չի գտնում:

Հայաստանի պարագայում կարևորվում է նաև ՄԿ գենդերային հիմնախնդիրների հետազոտությունը, մասնավորապես՝ կանացի աշխատուժի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով՝

1. Հայաստանում բարձրագույն կրթություն ունեցողների մեջ գերակշռում են կանայք, ինչը վկայում է, որ կանանց ՄԿ առանձնանում է ավելի մեծ ներդրումներով:
2. Հայաստանի գործազուրկների մեջ գերակշիռ մաս են կանայք, ինչը վկայում է կանացի աշխատուժի անարդյունավետ օգտագործման մասին:
3. Հայաստանում կանանց միջին աշխատավարձը մոտ 1.5 անգամ զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձը, ինչը վկայում է կանանց վարձատրության բնագավառում խտրականության մասին[19]:

Հայաստանի պարագայում լուրջ հիմնախնդիր են որակյալ, ինտելեկտուալ ՄԿ-ի կենտրոնացումները: Խնդիրն այն է, որ որակյալ ՄԿ-ի գերակշիռ մասը կենտրոնացած է մայրաքաղաքում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ բարձրագույն կրթօջախների ճնշող մեծամասնությունը գտնվում է Երևանում: ՆՄԿ-ի կենտրոնացումը Երևանում լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում մարզերի ուսանողների համար՝ հանրակացարանային ծախսեր և այլն: Անհրաժեշտ է լիցքաթափել Երևանը և տարածաշրջանային համալսարաններ բացել:

Վերը ներկայացված հիմնախնդիրները լուրջ հրամայական են դնում Հայաստանում ՄԿ օմբուդսմենի ինստիտուտի ձևավորման նպատակով: ՀՀ-ի պարագայում մարդու իրավունքների պաշտպանության հետ մեկտեղ հավասար պաշտպանության կարիք ունի ՄԿ-ը:

Հայաստանում ՄԿ հիմնախնդիրներին է առնչվում նաև միգրացիայի շարունակական բարձր մակարդակը: Բնակչության միգրացիան կտրուկ հարվածում է ազգային ՄԿ-ին, քանի որ մարդիկ տվյալ երկրից հեռանում են՝ իրենց հետ տանելով տարիների ընթացքում կուտակված աշխատանքային փորձը և գիտելիքները:

[19] Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2011–2012, էջ 33:

ՆՄԿ-ը նույնպես առանձնահատուկ են Հայաստանում: Անհրաժեշտ է դասակարգել ՆՄԿ-ի տեսակները՝ մարդկային ռեսուրսից կախված և չկախված, կամ նյութական և ոչ նյութական: Ոչ նյութական ներդրումների շարքին պետք է դասել, օրինակ, ձեռնարկատիրական կարողությունները, որոնք ամենքին բնորոշ չեն:

ՆՄԿ-ը կարող են լինել դրամական և ոչ դրամական: Ոչ դրամական ՆՄԿ-ի շարքին կարող են դասվել փորձն ու հմտությունները, որոնք կուտակվում են տարիների ընթացքում:

ՆՄԿ-ը կապվում են հանրակրթական և բարձրագույն դպրոցների կրթության որակի հետ: Վերոհիշյալ բնագավառին բնորոշ է հետևյալը.

1. Կրկնուսույցների շուկայի առկայությունը, ուսուցիչների ցածր վարձատրությունը, կոռուպցիոն նկատելի ռիսկերը ինքնին վկայում են կրթության ցածր որակի մասին: Ըստ էության, կրթության նախկին համակարգն ամբողջությամբ փլուզված վիճակում է, իսկ Բոլոնիայի համաձայնագրով նոր կրթահամակարգն ամբողջովին չի ձևավորվել: Ընդ որում՝ կրթության որակը գնալով անկում է ապրում:
2. Որոշ բուհերում որպես ընդունելության քննություն սահմանվել են այնպիսի առարկաներ, որոնք բավարար խորությամբ չեն դասավանդվում հանրակրթական դպրոցներում, ինչն էլ պատճառ է դառնում դիմորդների շուկայի կրճատման: Օրինակ, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի բակալավրիատի ընդունելության քննություններ են սահմանված SAT (մաթեմատիկա անգլերենով) և TOEFL, որոնք հանրակրթական դպրոցի շրջանակներում չեն ուսուցանվում:
3. Բարձրագույն կրթության հաստատությունները նույնպես առանձնահատուկ որակ չեն ապահովում: Պատահական չէ այն հանգամանքը, որ հայկական որևէ բուհ չի մտնում վարկանշման ցուցակի մեջ: Այս փաստին անդրադարձ է կատարվել Ազգային մրցունակության զեկույցում նույնպես[20]:

Հայաստանում ՆՄԿ վիճակը կարելի է բնութագրել հետևյալ ցուցանիշներով՝

[20] Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2011–2012, էջ 51

Աղյուսակ

ՆՄԿ բնութագրող հիմնական ցուցանիշները ՀՀ-ում 2007–2012 թթ.

	Տարիներ					
	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*
1	2	3	4	5	6	7
Նախադպրոցական համայնքային և գերատեսչական հաստատությունների քանակ	617	608	599	606	608	631
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		-1.46	-1.48	1.17	0.33	3.78
Նախադպրոցական համայնքային և գերատեսչական հաստատություններում երեխաների քանակ	49777	52912	53161	56895	60854	66728
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		6.30	0.47	7.02	6.96	9.65
Հանրակրթական դպրոցների քանակ	1417	1424	1404	1402	1396	1388
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		0.49	-1.40	-0.14	-0.43	-0.57
Հանրակրթական դպրոցներ հաճախողների քանակ	431280	414781	392946	370892	386439	368708
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		-3.83	-5.26	-5.61	4.19	-4.59
Բուհերի քանակ	85	90	77	74	68	65
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		5.88	-14.44	-3.90	-8.11	-4.41
Բուհերում սովորողների քանակ	112253	114399	114629	111003	94944	89781
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		1.91	0.20	-3.16	-14.47	-5.44
Բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների քանակ	4267	4011	3089	3316	3036	2725
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		-6.0	-22.99	7.35	-8.44	-10.24
Բուհերից դուրս մնացածների քանակ	5370	5938	5868	7760	9451	7930
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		10.58	-1.18	32.24	21.79	-16.09
Բակալավրիատում սովորողների քանակ	97674	104482	105317	103089	86981	80814
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		6.97	0.8	-2.12	-15.63	-7.09
Մագիստրատուրայում սովորողների քանակ	14570	9917	9312	7914	9327	15151

Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		-31.94	-6.10	-15.01	17.85	62.44
Ասպիրանտների թվաքանակը	1414	1320	1393	1232	1054	1104
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		-6.65	5.53	-11.56	-14.45	4.74
Օտարերկրյա ասպիրանտների քանակը	107	510	520	486	468	476
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		376.64	1.96	-6.54	-3.7	1.71
Թեկնածուական թեզ պաշտպանած հայցորդների քանակ	254	127	88	114	71	117
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		-50.0	-30.71	29.55	-37.72	64.79
Դոկտորանտուրայում սովորողների քանակ	60	72	56	57	45	51
Աճը/նվազումը նախորդ տարվա համեմատությամբ, %		20.0	-22.22	1.79	-21.05	13.33

Ինչպես ցույց են տալիս աղյուսակում ներկայացված ցուցանիշները՝ Հայաստանում մտահոգության տեղիք են տալիս հանրակրթական դպրոցների, հանրակրթական դպրոց հաճախողների, բուհեր հաճախողների, բակալավրիատ և մագիստրատուրա հաճախողների, բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների քանակության տարեցտարի նվազումները: Ամենայն հավանականությամբ, այս հարցում իր առանցքային ազդեցությունն ունի ինտենսիվ արտագաղթը:

Ինչ խոսք, դրական կարելի է համարել օտարերկրյա ասպիրանտների թվաքանակի աճը:

Բուհերում լուրջ հիմնախնդիր է պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության հարցը: Հայաստանում չկա բավարար գործիքակազմ լավագույն դասախոսների ընտրության, ինչպես նաև նրանց որակի հսկողության: Կրթության համար պատասխանատու կառավարման մարմինները բավարար հսկողություն չեն իրականացնում դասախոսների որակի, նրանց անընդհատ և շարունակական վերապատրաստման նկատմամբ: Նույն տրամաբանությամբ՝ մարդկային կապիտալի վերապատրաստման կարիք ունեն իրենք՝ դասավանդողները (training for trainers), որի շուկան Հայաստանում նույնպես բացակայում է:

ՆՄԿ-ը հետազոտելու նպատակով դրանք անհրաժեշտ է դասակարգել հետևյալ կերպ՝

- Առողջության պահպանության ծախսեր,
- Կրթության ծախսեր,

- Վերապատրաստումների, որակավորման բարձրացման դասընթացների ծախսեր,
- Հանգստի և աշխատուժի վերականգնման ծախսեր,
- Պետության կատարած բոլոր ծախսերը՝ մարդկային կապիտալի պահպանման և հետագա սերունդներին փոխանման, հաստատությունների ստեղծման և պահպանության նպատակով՝ մսուր մանկապարտեզ, դպրոց, բուհ, հետբուհական կրթություն, վերապատրաստումների և որակավորման բարձրացման կենտրոնների պահպանություն, նաև մշակույթի կենտրոններ՝ թատրոն, օպերա (հոգևոր ներդրումներ), գիտության, գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում և այլն,
- Սպորտային հաստատությունների պահպանության, սպորտին և ֆիզկուլտուրային տրամադրված ծախսեր,
- Պետության կողմից նորմալ կենսապայմանների ապահովության ծախսերը, օրինակ՝ կոմունալ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսեր,
- Պետական անվտանգության և երկրի պաշտպանության (ոստիկանության) ծախսեր,
- Փորձի փոխանակության հետ կախված ծախսեր:

ՆՄԿ-ի բնագավառում պետության տեսանկյունից կարևորվում է սոցիալական արդարության սկզբունքների պահպանությունը, այսինքն՝ սոցիալապես անպաշտպան խավերի համար նվազագույն ՆՄԿ-ի հասանելիության ապահովումը:

Հայաստանի պարագայում ՆՄԿ-ի առումով առանցքային է հատկապես լուրջ ներդրումների անհրաժեշտության հետազոտությունը: Խնդիրն այն է, որ Հայաստանում բնակչության զբաղվածության վերլուծությունը ցույց է տալիս, որ կայուն զբաղվածությամբ առանձնանում են մտավոր մեծ կարողություններ և գիտելիքներ չպահանջող ճյուղերը, օրինակ՝ առևտուր, գյուղատնտեսություն, սպասարկումների ոլորտ և այլն: Թեպետ ՀՀ կառավարությունը հայտարարում է գիտատար ճյուղերի զարգացման գերակայությունների մասին, սակայն իրականությունը բոլորովին այլ է: Հետևաբար, Հայաստանում ձևավորված մակրոտնտեսական իրավիճակը չի նպաստում ՆՄԿ կատարելուն:

ՆՄԿ չիրականացնելուն մեծապես խոչընդոտում են նաև Հայաստանի տնտեսության առանձնահատկությունները՝ մենաշնորհային կենտրոնացումները, ստվերային տնտեսության մասշտաբները, ցածր աշխատավարձերը և այլն:

ՆՄԿ-ը բավարար արդյունքներ կապահովեն միայն պարարտ հողի առկայության պարագայում: Այս առումով, ՆՄԿ-ն անմիջականորեն կապ-

վում են աղքատության մակարդակի կրճատմանը, երեխաների առողջական վիճակի բարելավմանը:

ՆՄԿ-ի առումով մոտիվացիոն բաղադրիչ է հասարակության մեջ պետության կողմից բոլոր պայմանների ապահովումը ՄԿ-ի համարժեք իրացման համար: Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում է հետևյալ սկզբունքը՝ եթե դու խելացի ես, ապա ինչու ես աղքատ, որը, սակայն, չի գործում ՀՀ պարագայում: Այսինքն՝ ՆՄԿ-ը ինքնանպատակ չեն. անհրաժեշտ է մշտապես պահպանել կապիտալի բարձր արժեքը:

Գիտական հետազոտության առումով, թերևս, ամենաբարդ հիմնախնդիրը ՆՄԿ-ի արդյունավետության գնահատումն է:

ՆՄԿ-ի արդյունավետության գնահատման համար կարող է կիրառվել բազմագործոնային համակարգ՝

- ՀՆԱ-ի աճի տեմպեր (1 շնչի հաշվով ՀՆԱ),
- Ֆինիի գործակցի ցածր մակարդակը,
- Աշխատանքի արտադրողականության շարունակական աճ,
- Բնակչության եկամուտների շարունակական աճ,
- Գիտական հայտնագործությունների քանակը,
- Միջազգային օլիմպիադաներում հաղթողների քանակությունը,
- Արտադրության ավտոմատացման մակարդակը,
- Արտահանման ծավալների անընդհատ աճը,
- Միջազգային ֆիրմաների հետ համագործակցությունը,
- Միջազգային բարձր վարկանիշով համալսարանների մասնաճյուղերի ներկայությունը, համագործակցությունը,
- Միջազգային մրցաշարերում, աշխարհի մրցումներում հաղթողների քանակությունը,
- Օտարերկրյա ուսանողների, ասպիրանտների քանակությունը,
- Ուղեղների արտահոսքի բացակայությունը,
- Միջազգային որակավորման վկայական ունեցող անձանց քանակը,
- Միջազգային հանրահայտ կառույցներում (օրինակ, WB, IMF, WTO և այլն) աշխատող հայ մասնագետների քանակությունը,
- Երկիր ժամանող զբոսաշրջիկների քանակությունը,
- Համատեղ ձեռնարկությունների քանակությունը,
- Մանկամահացության ցածր մակարդակը,
- Կյանքի միջին տևողությունը,
- Մահացության ցուցանիշը,
- Բիզնեսի ազատականացման մակարդակը, գործարար ակտիվության աստիճանը,

- Բնակչության բարձր զբաղվածությունը գիտատար, ինտելեկտուալ ճյուղերում,
- Գործազուրկների մեջ բարձրագույն կրթություն ունեցողների բացակայությունը,
- Որակավորման բարձրացման դասընթացների և վերապատրաստման կենտրոնների քանակի աճը,
- Զբաղվածների միջին աշխատավարձի մեծությունը (պետական/մասնավոր հատված): Նպաստների (գործազրկության կենսաթոշակային, հաշմանդամներ) մեծությունը,
- Տնտեսության ստվերայնության ցածր մակարդակը, տնտեսության մոնոպոլացման ցածր մակարդակը, գործարար ակտիվության բարձր մակարդակը,
- Ներդրումների շարունակական աճը,
- Միջազգային փառատոների կազմակերպումը, այդ թվում՝ սպորտի բնագավառում օլիմպիադաների, միջազգային մրցաշարերի կազմակերպումը (ցուցանիշ է նաև «Եվրատեսիլում» հաղթող երկրում կազմակերպելը),
- Արվեստի, մշակույթի օջախների, գրադարանների, թանգարանների քանակությունը,
- Շրջակա միջավայրի պահպանությունը, օդի աղտոտվածության խիստ ցածր մակարդակը,
- Հանգստի և ազատ ժամանցի վայրերի, առողջարանների (այդ թվում՝ միջազգային) քանակությունը,
- Զարգացած երկրների գիտությունների ակադեմիաների պատվավոր անդամների թիվը (Նոբելյան և այլ հանրահայտ մրցանակաբաշխությունների, OSKAR-ի, GRAMY-ի մրցանակակիրների քանակությունը),
- Միջազգային գիտաժողովների անցկացման հաճախականությունը,
- Ազգային տնտեսության մրցունակության բարձր մակարդակը,
- Համացանցի, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների հասանելիությունը բնակչության լայն խավերին,
- Միջազգային մակարդակով հզոր (գիտատեխնիկական) նախագծերի իրականացումը,
- Մրցունակ աշխատուժի առկայությունը, միջազգային կազմակերպություններից հայ մասնագետների հրավերների քանակությունը:

Հաճախ դժվար է գնահատել ՆՄԿ-ի արդյունավետությունը, քանի որ հնարավոր է տարիների ընթացքում ներդրումներն անընդհատ կուտակվեն և միայն, օրինակ, 20–30 տարի հետո աննախադեպ արդյունք ապահովվի:

Նման տարբերակ հնարավոր է կրթության բնագավառում, հատկապես այն ճյուղերում, որտեղ մարդկային կապիտալն ամբողջությամբ և լիարժեքորեն դրսևորվում է տարիների ընթացքում որոշակի գիտելիքների և աշխատանքային փորձի ու հմտությունների կուտակման շնորհիվ:

Ինչպես արդեն նշվել է՝ ՄԿ և ՆՄԿ ցուցանիշների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է վերլուծության ենթարկել ՀՀ-ի մի շարք ցուցանիշներ: Մեթոդաբանության դժվարությունն այն է, որ անհրաժեշտ է ընտրել օպտիմալ մի ժամանակահատված, որի համար կգնահատվի ՆՄԿ արդյունավետությունը:

- բացահայտվել են ՄԿ-ի դրսևորման առանձնահատկությունները ՀՀ-ում,
- տրվել է ՄԿ-ի դասակարգումը,
- ներկայացվել են ՄԿ-ի լիարժեք և ամբողջական դրսևորման հիմքերը,
- համակարգվել են ՄԿ-ի բաղադրիչները,
- ներկայացվել են ՆՄԿ-ի չափորոշիչները,
- ներկայացվել է ՆՄԿ-ի արդյունավետության գնահատման համակարգը ՀՀ-ում,
- համակարգված ներկայացվել ՄԿ-ի արժեքի հաշվարկը:

Առաջարկություն

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության հետ մեկտեղ հավասար պաշտպանության կարիք ունի Մարդկային կապիտալը:

1. Brooking A., Intellectual Capital: Core Asset for the Third Millennium Enterprise. - International Thomson Business Press, London, 1996.
2. Human Capital Investment. An International Comparison - OECD, Palis, 1998.
3. Stéphane Trébucq, Capital humain et comptabilité sociétale : le cas de l'information volontaire des entreprises françaises du SBF 120, Revue Comptabilité Contrôle Audit, mai, tome 12, vol. 1, pp. 103–124, 2006.
4. Fabienne Autier, Vous avez dit "capital humain ?", *Gérer et comprendre*, n°85, septembre 2006.
5. Jean-Marie Albertini et Ahmed Silem, *Lexique d'économie*, Dalloz, Italie, 1999.
6. Formation professionnelle, Revue Europeene, Peut-on mesurer les benefices de l'investissement dans les ressources humaines? N 14 mai-aout 1998/11
7. PERETTI Jean Marie, Ressources hamaines, Vuibert, 2010
8. DURIEUX Jean-Christophe, BESSER Hannah, Reussissez vos recrutement, ESF editeur, 2011
9. LE BOTERF Guy, Construire des parcours personnalises de professionalisation, Eyrolles, 2010
10. BIGOT Philipe, Le coaching orient solution, Eyrolles, 2010
11. Нойманн Ф. Методика экономической оценки человеческого капитала. Тезисы докладов международной научно-практической конференции. Государственное управление: трансформационные процессы в современном мире. Ч. 2. Мн.; Академия управления при Президенте Республики Беларусь, 2002. – С. 98.
12. Самородова Е.М. Инвестиции в человеческий капитал (методологический аспект). Автореферат дисс. канд. наук. – Орел, 2000. – 23 с.
13. Симкина Л.Г. Человеческий капитал в инновационной экономике. – СПб.: СПбГИЭА, 2000. – 152 с.
14. Быченко Ю. Г. Важнейший показатель человеческого капитала //Человеческие ресурсы. - 2001. - №3.

ԱՐԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Մարդկային կապիտալը և ներդրումները մարդկային կապիտալում

Հայաստանի տնտեսական զարգացման ներկա փուլում առանձնահատուկ հրատապություն է ձեռք բերում մարդկային կապիտալում կատարվող ներդրումների շարունակականության ապահովումը: Միաժամանակ առանցքային է նաև մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետ պայմանների ապահովման հիմնախնդիրը: Վերը ներկայացված հարցադրումների լուծումներով է մեծապես պայմանավորված Հայաստանի տնտեսության մրցունակության հետագա բարձրացումը:

АРЕВИК ОГАНЕСЯН
кандидат экономических наук, доцент

Инвестиции в человеческий капитал

На современном этапе экономического развития Армении своеобразную актуальность приобретает продолжительное осуществление инвестиций в человеческий капитал. В то же время ключевой является проблема создания эффективных условий использования человеческого капитала. Решением высшеизложеных задач обусловлено дальнейшее развитие конкурентоспособности экономики Армении.

AREVIK HOVANNISYAN
PhD in Economics, Associate professor

Investments In Human Capital

At the current stage of Armenian economic development the continuity of the investment in human capital is urgent. At the same time the problem about the conditions of use of human capital is also a key factor. Solutions of above mentioned questions can increase the competitivness of Armenian economy.

«ԱՄԲԵՐԴ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 9/1

Հեղինակներ՝
Ա. ԱՍԼԱՆՅԱՆ
տ.գ.դ., պրոֆեսոր
Մ. ԲԱԴԱԼՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ, ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏ ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Խմբագիր՝ ***Վ. Միրզոյան***
Տեխնիկական խմբագիր՝ ***Ն. Խչեյան***

Էջադրումը և սրբագրումը՝ ***Ս. Բոյաջյանի***
Ձևավորումը՝ ***Ն. Խչեյանի***

Չափս՝ 70×108 1/16:
4 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37